

«ՍՏԵՓՁՈՐ -1» ՍՊԸ

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԶՔՆԱՂ-1» ՓՀԷԿ-Ի ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
լրամշակված

«ՍՏԵՓՁՈՐ - 1» ՍՊԸ տնօրեն



Վալերի Հարությունյան



Բովանդակություն

Էջ

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ	5
3. Հապավումներ.....	5
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.	8
6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Հաշվետվության մշակման հիմքերը	9
7. Նախատեսվող գործունեության բնութագրերը.	10
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը	10
8.1 Ենթակա տարածք	10
8.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի բնութագրերը	19
8.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ	19
8. 2.2. Սելսմիկա և երկրաբանություն	21
8. 2.3. Կլիմա և օդային ավազան	21
8.2.4. Հողային ռեսուրսներ.	26
8.2.5. Ջրային ռեսուրսներ.....	29
8.2.6. Կենսաբազմազանություն	31
8.2.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.	38
8.2.8. Պատմամշակութային հուշարձաններ.	39
8.2.9. Բնության հուշարձաններ.	42
8.2.10. Սոցիալական.....	43
9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը.....	47
10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, հզորությունները, օգտագործվող բնական ռեսուրսները և նյութերը.	48
10.1 Շահագործման փուլ.	49
10.2 Շինարարության փուլ.	53
10.3. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.	57
10.3.1 Ջուր. շինարարության փուլում.....	57
10.4.Նյութեր.	58
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն(շինարարության և շահագործման, փակման փուլեր).....	59
11.1 Օդային ավազան.....	59
11.2 Հողային ռեսուրսներ.	60
11.3. Ջրային ռեսուրսներ.....	61
11.4 Կենսաբազմազանություն.....	62

11.5 Թափոններ.	64
11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	66
11.7. Աղմուկ և թրթռում.....	66
11.8 Արտակարգ իրավիճակներ.....	67
11.9 Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն, մարդու առողջություն.	68
11.10 Սոցիալական գործոններ.	68
11.11 Լանդշաֆտ և բարեկարգում, կանաչապատում.	69
11.12 Կլիմա.....	70
11.13. Գումարային ազդեցություններ.	70
12. Տնտեսական վնաս.	71
Հողի տնտեսական վնասի հաշվարկ 71	
13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.....	72
13.1. Օդային ավազան.	72
13.2. Հողային ռեսուրսներ.	73
13.3. Ջրային ռեսուրսներ.....	74
13.4. Կենսաբազմազանություն.	75
13.5. Թափոններ.	76
13.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	77
13.7. Աղմուկ և թրթռում.....	77
13.8. Արտակարգ իրավիճակներ.	78
13.9. Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն, մարդու առողջություն 79	
13.10. Սոցիալական.....	80
13.11. Լանդշաֆտ և բարեկարգում, կանաչապատում.....	81
14. Մշտադիտարկումների (մոնիթորինգի) իրականացման պլան.	81
15. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	83
Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	84
16. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր).....	101
17. Բողոքների ընթացակարգ.....	108
18. Եզրահանգում 108	
19. Հետնախագծային վերլուծություն 108	
20. Փակման փուլ..... 108	
21. Հանրային քննարկումներ 109	
Գրականություն 110	

1.Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Զքնաղ-1» ՓՀԷԿ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն:
Ձեռնարկող	«ՍՏԵՓԶՈՐ -1» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ ք. Երևան, Նալբանդյան փողոց/29/36 Կենտրոն
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնք, բնակավայրեր Ուրասար և Ստեփանավան:
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Հեռ. /093/ 65-44-55, Valeri Harutyunyan <valeriharutyunyan@gmail.com>
Պատվիրատու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ
Նախագծող	«Եվրոհիդրոէներգո»ՍՊԸ
ՇՄԱԳ նախագծող	«Նովալ» ՍՊԸ
ՇՄԱԳ մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 Noval LLC noval.llc.noval@gmail.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականները, պետ.

Ռեգիստրը,

Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքներ

Հավելված 3. Գլխավոր հատակագծեր

Հավելված 4. Հողի անալիզի արդյունքները

Հավելված 5. Մթնոլորտային օդի հաշվարկները, զոդման արտանետումների հաշվարկ

Հավելված 6. Համայնքի տեղեկանքը աղբահանության և տարածքում

կոմունիկացիաների բացակայության վերաբերյալ

Հավելված 7. Ստեփանավանի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքը՝

գործունեության տարածքի ուսումնասիրության, ծառերի հատման

թույլտվության, նոր տնկվող ծառերի տնկման տարածքների և

տնկման ժամանակահատվածի վերաբերյալ:

Հավելված 8. Համայնքի Ավագանու որոշումը

Հավելված 9. ՀՀ Լոռու մարզպետի, Ստեփանավան համայնքի ղեկավարի, «Հայանտառ»

ՊՈԱԿ-ի գրությունները «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ Անտառային հողը

վարձակալության տրամադրելու վերաբերյալ:

Հավելված 10. Հանրային քննարկման արձանագրություններ, մասնակիցների ցանկ,

Լուսանկարներ, «Առավոտ» թերթի հայտարարություն:

Հավելված 11. Պետական տուրքի վճարման անդորրագիրը

3. Հապավումներ

փհէկ՝ փոքր հիդրոէլեկտրակայան

ՄՎտ՝ մեգավատ

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվության ընկերություն

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ Օրենք (2023թ. մայիսի 3)–Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի 5 իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք» (ընդունված՝ 2011թ. նոյեմբերի 28, փոփոխությունները՝ 2022 թվականի մայիսի 25)–սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը,

կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006) - սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) - Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) - Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության,

վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ Հողային օրենսգիրք» (2001թ.)- Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

ՀՀ կառավարության որոշումներ

❖ **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014թ. նոյեմբերի 19-Ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշում:

7

❖ **ՀՀ կառավարության 25 հունվարի 2018թ.** «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. հունիսի 30-Ի «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի

գնահատումները սահմանելու մասին» N 927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 57-Ն որոշում:

- ❖ **ՀՀ Կառավարության 8 ապրիլի 2021թ.** «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» N 488-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 դեկտեմբերի 2023 թվականի «Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանելու մասին» N 2207-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի.2010թ.**՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ.**՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի** «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կարգրած ճանաչելու և 2001թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ.** «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ.** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:
- ❖ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2003 թ.-ի հոկտեմբերի 26-ի «ՀՀՇՆ 33-02-2023 «Հենապատեր, նավարկելի ջրարգելակներ, ձկնաթողման և ձկնապաշտպան շինություններ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N11-Ն հրամանում փոփոխություններ 8 կատարելու մասին հրաման:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական

գործընթացների վերաբերյալ.

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեությունը, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ժա. ենթակետի էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «1 ՄՎտ և ավելի էլեկտրական հզորությամբ հիդրոէլեկտրակայաններ»: Նախատեսվող ՓՀԷԿ-ի դրվածքային հզորությունը՝ N = 4,2 ՄՎտ:

Նշված նախատեսվող գործունեությունը ներառված է Ա կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Ա կատեգորիայի ընթացակարգով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխատեսումը, դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումների նախատեսումը:

Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը 26.09.2025թ. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Չքնադ-1» ՓՀԷԿ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրամադրել է բացասական եզրակացություն, մի շարք դիտողություններով, ներկայացված բոլոր դիտողությունների պատասխանները սույն ՇՄԱԳ հաշվետվությունում մանրամասն հաշվի են առնվել, ներկայացվել են համապատասխան լուծումներ և հիմնավորումներ:

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Հաշվետվության մշակման հիմքերը

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Չքնադ-1» ՓՀԷԿ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակված է հիմք ընդունելով.

- նախագծային փաստաթուղթը,
- սեփականության վկայականները՝ N17062025-06-0037, N 11062025-06-0067: Հավելված1, 9
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվություն՝ N 413-24, տրված 27.09.2024թ:

7. Նախատեսվող գործունեության բնութագրերը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Նալբանդյան փողոց/29/36 Կենտրոն: «Զքնաղ-1» ՓՀԷԿ-ը նախատեսվում է կառուցել Լոռու մարզում, Ստեփանավան /10հողամաս/ և Ուրասար /6 հողամաս/ բնակավայրերի վարչական տարածքներում, Զքնաղ գետի ափին:

8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

8.1 Ենթակա տարածք. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի և Ուրասար բնակավայրի վարչական տարածքներում: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Զքնաղ գետի» ձախ ափին: ՓՀԷԿ-ի տարածքը և հարակից տարածքը խոտածածկ է, առկա են ծառաթփեր, ծառեր՝ 60 ծառ, որից 35-ը մեծ ծառեր են՝ 20 տարեկան և ավելի հասակով: Առկա են նաև հատուկ նշանակություն ունեցող տնկեր, բոխի, եղևնի և այլ տեսակներ, ինչպես նաև մասրենիներ, մոշ, չիչխան և այլ թփատեսակներ:

Ծառերը հատվելու են, որոնց դիմաց ընկերությունը նույն տարածքում կտնկի 60 ծառ, ինչպես նաև Համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքներում կտնկի շուրջ 649 հատ ծառ: Առկա է համայնքապետարանի համաձայնությունը ծառերի հատման, նոր ծառատեսակների տնկման վերաբերյալ: հավելված 7:



Գլխամասի տեղադրման տարածքում բացակայում են ծառերը, առկա է խոտածածկ: Տարածքն արդեն ենթարկվել է մարդու գործունեության ազդեցությանը, քանի որ մոտ 15մ հեռավորության վրա գտնվում է այլ գործող հիդրոէլեկտրակայան:

Խողովակաշարի անցկացման տարածքներում՝ գետի ափին, առկա են ծառեր, բայց նախագծային լուծումները տրված են այնպես, որ ծառերը չվնասվեն: Խողովակաշարն 10 անցնելու է գետի ափից մոտ 3մ հեռավորության վրա, որտեղ բացակայում են ծառերը:



Համաձայն Կադաստրի անշարժ գույքի վկայականի Ստեփանավան քաղաքի 10 հողամաս հասցեում, տրամադրվել է 0,25 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, հողամասի սեփականության իրավունքով: Ուրասար բնակավայրի 6 հողամաս հասցեում տրամադրվել է 0,4հա, հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Գրանցված իրավունքի տեսակը սեփականություն: Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գրության դերիվացիոն խողովակաշարը մոտ 0,13091 հա անցնում է Պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերով /նպատակային նշանակությունը անտառ, գործառնական նշանակությունը՝ թփուտ/: Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կդիմի «Հայանտառ» ՊՈԱԿ-ին անտառների օգտագործման պայմանագիր կնքելու նպատակով:

ՓՀԷԿ-ը նախատեսում է օգտագործել Չքնաղ գետի ջրերը, գետը հանդիսանում է Ձորագետ գետի աջափնյա վտակը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 26կմ տարածության վրա: Չքնաղ գետը իր սկզբնամասում իրենից ներկայացնում է քիչ մշակված, V-անման ձորակ: Վերին հոսանքներում հովտի լանջերի թեքությունը 15 - 200 է, իսկ բարձրությունը՝ 100 - 150մ, որոնք աննկատելիորեն ձուլվում են շրջակա լեռնային տեղանքի հետ: Հովտի լայնությունը վերին մասում 200 - 300մ է: Լանջերը ծածկված են ալպիական և մերձալպիական մարգագետիններով:

Գործունեության տարածքը գտնվում է մոտակա Ուրասար բնակավայրից 346մ, տեղական ավտոճանապարհից՝ 51մ հեռավորության վրա:

Պատվարի տարածքի հեռավորությունները՝

1. Հանրապետական Հ-33 ճանապարհից մոտ՝ 7.2 կմ,
2. «Գետնանձավ» անձավային թունել երկրաբանական հուշարձան մոտ՝ 13.2 կմ,
3. Միջպետական Մ3 ավտոճանապարհի մոտ՝ 6.7 կմ,
4. Գյուլագարակ Դենդրոպարկ մոտ՝ 9 կմ
5. Անտառային գոտուց՝ 113մ:
6. Ուրասար բնակավայրից՝ 346մ:

ՓՀԷԿ-ի շենքի տարածքի հեռավորությունները՝

1. Ստեփանավան քաղաքից՝ 123մ
2. Գետից՝ 39մ
3. Տեղական նշանակության ճանապարհից՝ 204մ


4. Հանրապետական Հ-34 ճանապարհից՝ 848 մ,
- 5.«Գետնանձավ» անձավային թունել երկրաբանական հուշարձան՝ 6.7 կմ,
6. Միջպետական Մ3 ավտոճանապարհ՝ 523 մ,
- 7.Գյուլագարակ Դենդրոպարկ՝ 5.45 կմ:

ՓՀԷԿ-ի շենքի կոորդինատները WGS համակարգում

Նախագծվող ՓՀԷԿ-ի շենք		
Երջարանային բնկան կետեր	կոորդինատներ	
	Y	X
1	8447582.5318	4542062.7863
2	8447573.3396	4542070.8410
3	8447598.5580	4542100.7969
4	8447608.3330	4542092.2316

Բողանակ		
Երջարանային բնկան կետեր	կոորդինատներ	
	Y	X
1	8447573.9759	4542038.5652
2	8447550.9286	4542056.7681
3	8447606.5407	4542121.8593
4	8447629.3356	4542102.7168


ՀՀ, Լոռու մարզի Ստեփանավան համայնքի
Ուրասար գյուղում գտնվող «ՍՏԵՓՁՈՐ-1»
ՄՊԸ-ի վարձակալության տարածքի
տեղադիրքի տեղադիրքի քարտեզ-սխեմա
(Պատվարի տարածք)



Պայմանական նշաններ

- | | |
|-------------------------|-----------------------------------|
| Հեռավորություններ | Ուսումնասիրության տեղաձգ (0.4 հա) |
| Տեղական ավտոճանապարհներ | Գետեր |

ՀՀ, Լոռու մարզի Ստեփանավան համայնքում
գտնվող «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ի
սեփականություն հանդիսացող տարածքի
տեղադիրքի քարտեզ-սխեմա
(ՓՀԵԿ-ի շենքի տարածք)



Գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները: Գործունեության տարածք մոտենալու են գոյություն ունեցող ոչ բարեկարգ ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Նախատեսվող գործունեության շրջանակներում դրանք կբարեկարգվեն:

«Էռա» ՍՊԸ-ի կողմից կատարվել է գործունեության ենթակա տարածքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ, որի ժամանակ օգտագործվել են բնական մերկացումները, ճանապարհային բացվածքի մերկացումները, ինչպես նաև գործունեության շրջանին վերաբերվող երկրաբանական նյութերը:

Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, արտածին երևույթներ. Լոռվա սարահարթը բարձրադիր հարթավայր է, ունի եռանկյունու ձև, 30.0կմ երկարություն և 18.0կմ լայնություն: Չզվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, ունի հարավ-արևելյան կտրուկ թեքություն, 1300-1600մ բարձրություն:

Կազմված է վերին պլիոցենի և անթրոպոգենի անդեզիտաբազալտներից և բազալտներից՝ ծածկված ջրասառցադաշտային, հեղեղատային նստվածքներով: Արևմուտքում մակերևույթը միատարր է, արևելքում՝ մասնատված Ձորագետի, Ուռուտի, Տաշիրի և Գարգառի խոր կիրճերով: Գետահովիտը հիմնականում զառիթափային լանջերով կիրճ է, կազմված բազալտներից՝ ծածկված կավավազներով, տեղ-տեղ էլ մերկացված բազալտներով:

Երկրաբանական կառուցվածքը, երկրաբանական երևույթները ՓՀԷԿ-ի տարածքում գլխավորապես տարածված են Լոցենի հասակի հրաբխա-նստվածքային առաջացումները, որոնք հզոր շերտախմբերի ձևով ընդգրկել են գետի գետահովտի և նրա վտակների ավազանները:

Լեռնալանջերի և գետահունի տարբեր մասերում Լոցենի ապարները ծածկված են ժամանակակից դելյուվիալ-կոլյուվիալ և ալյուվիալ, և քիչ վերին չորրորդական բարձր դարավանդային ալյուվիալ գրունտներով: Դրանց հզորությունը հասնում է մինչև 4,0-5,5մետրի:

Նկարագրվող տարածքում տեղի ունեցող ֆիզիկա-երկրաբանական երևույթներից առավելապես աչքի են ընկնում գետային և լանջային էոզիանները, ժայռային ապարների հողմնահարումը, և անձրևաջրային հեղեղումները, որոնք կարող են վտանգավոր ազդեցություն ունենալ ՓՀԷԿ-ի կառույցների շինարարության և շահագործման ժամանակ: Նշենք նաև, որ այդտեղ հողաշերտի ձմեռային սառեցման խորությունը հասնում է 110 սմ ՓՀԷԿ-ի համար նախատեսվող գլխավոր կառույցների տեղամասերի ինժեներա-երկրաբանական պայմանները հիմնականում նույնանման են:

ՓՀԷԿ-ի նախատեսված կառույցների համար կայուն հիմք են ծառայելու այնտեղ տեղադրված դելյուվիալ-կոլյուվիալ և ալյուվիալ առաջացումները:

Կառույցների տեղամասերի ինժեներա-երկրաբանական պայմանները հիմնականում նույնանման են: Դրանք որոշակիորեն տարբերվում են իրենց գեոմորֆոլոգիական ձևերով և ռելեֆի առանձնահատկություններով: Կառույցների տեղամասերում տարածված գրունտներն իրենց գենետիկական, լիթոլոգիական և ֆիզիկա-մեխանիկական հատկությունների տեսակետների կամ շերտերի, որոնց բնութագրումներն ըստ ստրատիգրաֆիական կարգի (հնից-նորը) բերվում են ներքևում:

Շերտ 5. Առկա է բուսահող ՓՀԷԿ-ի շենքի տարածքում 35սմ հզորությամբ և ճնշումային խողովակաշարի վերջնամասում 35սմ:

Շերտ 4. Այս շերտի ապարները նույնպես Լոցենի հասակի են և ներկայացված են մուգ

մոխրագույնից, մոխրա-կանաչավուն, մանր և միջին բեկորային տուֆաքրեկչիաներով, պարֆիրիտներով և տուֆիտներով: Մակերեսից դրանք քիչ հողմնահարված են և ճեղքավորված, հիմնականում ունեն մեծաբեկոր և հաստ շերտավոր անջատումներ և միջին կարծրություն: Նշված ապարները բազմաթիվ մերկացումներ ունեն թեժ լանջերին և ճանապարհամերձ բացվածքներում:

Շերտ 3. ներկայացված է վերին չորրորդական հասակի գետի բարձր դարավանդային ալյուվիալ առաջացումների ոչ մեծ մնացորդներով, տեղադրված էոցենի տուֆաքրեկչիաների վրա: Դրանք նկատվում են գոյություն ունեցող հողային ճանապարհի միջին մասի կտրվածքում և տալիս են գլաքարա-կոպճա-մանրախճային կուտակումներ, որոնք թույլ ցեմենտացված են տարբերահատիկ ավազների և կավավազների մինչև 25% խառնուրդով: Սրանց հզորությունը հասնում է մինչև 1.5-2.0մ:

Շերտ 2. ներկայացված է գետի ժամանակակից ալյուվիալ նստվածքներով, որոնք հիմնականում ունեն կոպճա-մանրախճային և քիչ գլաքարային կազմ, լցունված մինչև 30% ավազներով և կավավազներով: Գետաբերանի մոտ այս շերտի հզորությունը հասնում է 5.0մ:

Շերտ 1. Այս շերտում ընդգրկված են ժամանակակից դելյուվիալ-կոլյուվիալ չբաժանված առաջացումները, որոնք մինչ 2.2-3.5մ հզորությամբ կուտակումներով հանդես են գալիս գետահովտի լանջերի տարբեր մասերում: Դրանք հիմնականում բաց գորշավուն կավավազներ և առանձին տեղերում բաց դարչնագույն, պինդ առաձգական, խիտ կազմության ավազակավեր են 30-40% խիճ-խճավազային և մեծաբեկոր ներփակումներով: Լանջերի ստորոտներում այդ շերտը երբեմն ներկայացված է խիճ, խճավազ և մեծաբեկոր կուտակումներով, կավավազներով և ավազակավերով լցունված:

Ներքևում բերվում են ՓՀԷԿ-ի կառույցների տեղամասերի նկարագրությունը:

Գլխամասային հանգույց. Գլխամասային հանգույցի կառույցները տեղադրվելու են Չքնաղ գետի հունի և նրա ափամերձ հատվածում, որտեղ տեղադրված են ժամանակակից դելյուվիալ-կոլյուվիալ առաջացումները(շերտ 2): Իսկ աջ ափին միջին բեկորային տուֆաքրեկչիաներով, պարֆիրիտներով և տուֆիտներով(շերտ 4): Մակերեսից դրանք քիչ հողմնահարված են և ճեղքավորված, հիմնականում ունեն մեծ մեծաբեկոր և հաստ շերտավոր անջատումներ և միջին կարծրություն:

Ճնշումային խողովակաշար. Ճնշումային խողովակաշարը կառուցվելու է գետի ձախ ափում՝ նախկինում գոյություն ունեցող հողային ճանապարհի եզրով, որտեղ տարածված են ժամանակակից դելյուվիալ-կոլյուվիալ առաջացումները(շերտ 1): Խողովակաշարի ուղեգծի վերջնամասի տարածքում մերկացումների ձևով տեղադրված են ժամանակակից դելյուվիալ-կոլյուվիալ առաջացումները(շերտ 1), ծածկված 35սմ հաստությամբ բուսահողով (շերտ 5):

ՓՀԷԿ -ի շենքը կառուցվելու Չքնաղ գետի աջափնյա հատվածում, որը գետափի հունից բարձր է մոտ 3,0մ և իրենից ներկայացնում է դարավանդային առաջացումներով կազմված վերին չորրորդական հասակի ալյուվիալ 2.5-3.5մ հզորությամբ ծածկված դելյուվիալ-կոլյուվիալ 1.5-2.մ հզորության ծածկոցով: Վերջիններս ծածկված են 35սմ հաստությամբ բուսահողով (շերտ 5):

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները. վերը ներկայացված շերտերում ընդգրկված գրունտների հիմնական ֆիզիկա-մեխանիկական հատկությունները համապատասխանում են այդ գրունտների լիթոլոգիական կազմի, հատիկաչափության, խտության կարծրության, հողմահարման և ճեղքավորվածության

աստիճանի առանձնահատկությունների և նմանատիպ գրունտների հատկություններին:
Օդային զիծ: Իրականացված ինժեներատեխնիկական ուսումնասիրությունները պարզել են, որ ամբողջ ուղեգծով գրունտները ժայռային են: Վտանգավոր ֆիզիկատեխնիկական պրոցեսները և երևույթները (կարստ, սողանք, փլուզում և այլն) բացակայում են:

Սեյսմիկա. Համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզի ուսումնասիրվող շրջանը պատկանում է 2-րդ գոտուն: Գրունտների սպասվելիք արագացումների մեծությունը կազմում է 0.4g, համաձայն ՀՀՇՆ20-04-2020.Երկրաշարժադիմացկուն շինարարություն: Նախագծման նորմեր:

Կլիմա. Կլիմայական տեսակետից ուսումնասիրվող շրջանը աչքի է ընկնում բարեխառն, տարվա բոլոր սեզոններին համեմատաբար խոնավ կլիմայով: Ձմեռը մեղմ է, խոր և երկարատև ձյան ծածկույթով, որը հայտնվում է նոյեմբերի վերջին:

Տեղումների քանակի 43-49% թափվում է ցուրտ ժամանակաշրջանում (նոյեմբեր-մարտ), ամենաանձրևային ամիսները ապրիլ- մայիս, ամենաչորայինը դեկտեմբեր: Ձյան ծածկույթն ի հայտ է գալիս նոյեմբերին և վերանում է մարտի վերջին: Ձյան ծածկույթի առավելագույն բարձրությունը ձմեռվա ընթացքում Ստեփանավանում կազմում է 85սմ:

Հիդրոլոգիան Գրունտային ջրերը տվյալ տարածքում շատ են զարգացած: Նրանք տարածականորեն կապված են էոցենի հասակի ժայռային ապարների առանձին խորքային ճեղքերի հետ և որոշ տեղերում դուրս են գալիս լեռնալանջերին և ձորակներում և սնուցում ու կազմավորում գետային հոսքը: Գրունտային ջրերը գետահովիտներում նկատվում են հունի և նրա մերձափնյա տարածքներում տեղադրված ալյուվիալ և դելյուվիալ-կոլյուվիալ նստվածքներում:

Ջրային ռեսուրսներ. Հայցվող տարածքի շրջանում մակերևութային ջրային միավորը Չքնաղ գետն է, որը հանդիսանում է Ձորագետ գետի աջափնյա վտակը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 26կմ տարածության վրա: Գետը սկիզբ է առնում **Բազումի** լեռնաշղթայից և հոսում է ընդհանուր հարավ-արևելյան ուղղությամբ: Ջրհավաք ավազանի մակերեսը հավասար է 163կմ², գետի երկարությունը՝ 28կմ, ջրավազանի միջին բարձրությունը՝ 1990մ, գետի միջին թեքությունը՝ 35‰: Հոսում է **Լոռու դաշտով** և **Ստեփանավան** քաղաքի մոտ միանում Ձորագետին: Սնումը խառն է՝ հալոցքային (41 %), անձրևային (30 %) և ստորերկրյա (29 %), վարարումը՝ մայիս-հուլիսին, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 58 %-ը: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Գետի հունային մասում տարածված են խոշոր գլաքարեր, ճալաքար և կոպճավազ:

«Չքնաղ -1» ՓՀԷԿ-ի կառուցվածքների ինժեներատեխնիկական պայմանները և ֆիզիկամեխանիկական բնութագիրը բարենպաստ են ՓՀԷԿ իրականացնելու համար:

Աղյուսակ 8. Տեղումների ամենամեծ տարեկան, ամսական և օրեկան քանակությունը (մմ)

NN	Կայանը	Տարվա համար		Ամսվա համար		Օրվա համար	
		մմ	տարի	մմ	ամսաթիվ	մմ	ամսաթիվ
1.	Ստեփանավան	952	1963	221	06.1940	103	05.1963
2.	Տաշիր	938	1963	247	06.1939	116	05.1963

Չքնաղ գետի բնապահպանական ելքերը Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության գետերում բացակայում են հիդրոկենսաբանական, հիդրոմորֆոլոգիական և հիդրոքիմիական մոնիտորինգի տվյալները, բնապահպանական ելքի ամսական արժեքները հիդրոլոգիական դիտակետում որոշվում են ձմեռային ժամանակաշրջանում առավել նվազագույն ելքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին ելքի արժեքին ավելացնելով տվյալ ամսվա բազմամյա բնական նվազագույն ելքի արժեքի 1/3 մասը՝ 33%-ը: Եթե բնապահպանական ելքի ամսական հաշվարկված արժեքը մեծ է ստացվում տվյալ ամսվա բնական նվազագույն ելքի արժեքից, ապա որպես բնապահպանական ելք ընտրվում է տվյալ ամսվա բնական ելքի արժեքը: Ամսական բնապահպանական ելքի արժեքներով հաշվարկվում են հիդրոլոգիական սեզոնների (դեկտեմբեր-փետրվար, մարտ-հունիս, հուլիս-նոյեմբեր) բնապահպանական ելքի արժեքները:

Գետի ջրային ռեժիմին առանձնահատուկ են հետևյալ փուլերը՝ գարնանային վարարումներ, որոնք գրավում են նաև ամառվա որոշ մասը, անձրևային վարարումներ, աշնանային ցածր մակարդակ, ամռան-աշնանային և ձմեռային ցածր մակարդակ:

Չքնաղ գետի ջրային ռեժիմը, ի տարբերություն շրջանի մյուս գետերի, բնութագրվում է սահուն, երկարատև վարարումներով (ապրիլ-հուլիս), որը պայմանավորված է հիմնականում ձյան և սառույցի հալոցքի սնմամբ, ինչպես նաև անձրևներով: Չքնաղ գետի դիտարկումների ժամանակ ջրի մակարդակի առավելագույնը կազմել է 158սմ, իսկ տարվա համար՝ 146 սմ: Աշնանային մակարդակը կախված անձրևներից ոչ նշանակալի է: Ամառային, աշնանային, ձմեռային ժամանակաշրջանում մակարդակը կայուն է, չնայած ոչ հաճախ տեղում են կարճատև անձրևներ կամ ձյուն: Ամեն տարի Չքնաղ գետը վերին հոսանքներում սառցապատվում է կայուն սառցաշերտով, որը միջինը տևում է 50-60օր, ձմռանը սառցաշերտի հաստությունը հասնում է 5-10սմ: Չքնաղ գետի հաշվարկային ուղղահաստաձևի տարեկան հոսքի բնութագրման համար օգտագործվել են Չքնաղ-Ստեփանավան ջրաչափական կայանի հոսքային տվյալները: Մինչև միջին հոսքի հաշվարկների սկսելը, համաձայն նշված կայանի, կատարվել է բնական հոսքի վերականգնում, այսինքն ջրի փաստացի ծախսերին ավելացվել է ոռոգման և ջրամատակարարման ջրերը՝ հաշվի առած հետադարձ թույլատրելի կորուստները: Ջրի հոսքի բնական ռեժիմի վերականգնման ժամանակ հաշվի են առնվել նաև հետադարձ ջրերը, ոռոգման ժամանակ՝ 10%, ջրամատակարարման ժամանակ՝ 70%: Համամասնորեն ստացվել են Չքնաղ-Ստեփանավան կայանի հաշվարկային հոսքի նորման:

Չքնաղ գետի (դ.Ստեփանավան) ջրի բազմամյա բնական նվազագույն ելքերը, մ³/վրկ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
0.64	0.66	0.80	1.89	1.56	1.50	1.44	0.74	0.40	0.32	0.42	0.57

Չքնաղ գետի (դ.Ստեփանավան) հաշվարկված բնապահպանական ելքերը, մ³/վրկ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
0.58	0.59	0.64	0.99	0.88	0.87	0.84	0.61	0.50	0.48	0.51	0.56

Ստորերկրյա ջրեր. Հայցվող տարածքի շրջանը հարուստ է խորքային՝ արտեզյան ջրերով և աղբյուրներով: Լոռու սարահարթի ստորերկրյա ջրերի ավազանը գտնվում է Ձորագետ և Տաշիր գետերի վերին և միջին հոսանքներում են, ներկայացված ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով՝ ծածկված լավային ապարների (բազալտներ, անդեզիտա-

բազալտներ) հզոր շերտով:

Ստորգետնյա ջրերի սնուցման մակերեսը կազմում է մոտ 295 քառ.կմ: Ստորերկրյա քաղցրահամ ջրերի սնուցումը կատարվում է հիմնականում մթնոլորտային տեղումների հաշվին: Ստորերկրյա բոլոր ջրահոսքերի շարժումը սնման մարզից դեպի բեռնաթափման մարզ կատարվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք: Աղբյուրները վարընթաց տիպի են, ջրերը լավ որակի, բավարարում են խմելու ջրի նորմերին և կապտաժային կառույցների միջոցով մատակարարվում են բնակավայրերին: Երկարաժամկետ դիտարկումների արդյունքում պարզվել է, որ բնական պայմաններում աղբյուրների ջրադինամիկական ռեժիմի ցուցանիշները (ծախս, ջերմաստիճան, քիմիական կազմ, հանքայնացում և այլն) էական փոփոխությունների չեն ենթարկվում:

Հողային ռեսուրսներ. Հողային ծածկույթը ջրավազանի տարածքում խայտաբղետ է: Ավազանի վերին հոսանքերը լրիվ զբաղված են մերձալայյան, լեռնամարգագետնային դարձնագույն հողերով՝ սևահողերով: Իսկ ավազանի միջին մասը զբաղված է լեռնային սևահողերով, խոնավ տափաստանների սևահողերով, որոնք տեղ-տեղ տարալուծված են լեռնային չափավոր խոնավ տափաստանների ածխաթթվային սևահողերով: Հանդիպում են նաև լեռնատափաստանային հողեր, իսկ 1500մ նիշերից ներքև ջրավազանը ծածկված է հրաբխային ապարների քայքայումից առաջացած գորշ բուսահողերով:

Նախատեսվող ՀԵԿ-ի կառուցման տարածքում մասնագետի կողմից կատարվել է ուսումնասիրություն: Տարածքը գտնվում է թույլ թեք լանջի վրա: Համաձայն կատարված ուսումնասիրության արդյունքների՝ անտառի տարածքը էրոզացված չէ, առկա է անտառային փովածք: Այդ տարածքում հողերը համարվում են անտառային դարձնագույն հողեր, իսկ հողի պատկերը ցույց է տալիս, որ ջրային հոսքեր չեն առաջացել, այդ պատճառով էլ հողի մակերևույթը եղել է խոնավ ժամանակ մուգ սև գույնի փուխր զանգված, չէրոզացված: Կատարվել է հողի նմուշառում և անալիզ, համաձայն որի՝ հողը հեշտ փխրվում է, հարուստ է հումուսով՝ 7.8%, рН-ը՝ 6.5-7.5: Հողը հարուստ է սննդատարրերով, ջրալույծ աղերի պարունակությունը գտնվում է բույսերի համար թույլատրելի նպաստավոր սահմաններում՝ բույսերի համար մատչելի ազոտը կազմում է 4,28 մկգ, ֆոսֆորը 9,89 մկգ, կալիումը՝ 107,43 մկգ, հողանմուշի միջավայրի ռեակցիան թույլ թթվային է: Ելնելով այս տվյալներից, հողը համարվում է շարժուն սննդատարրերով ապահովված հող: Հավելված 4:

Գործունեության տարածքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, չեն արձանագրվել ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների աճելավայրեր կամ ապրելավայրեր, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության օբյեկտներ:

8.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի բնութագրերը

8.2.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի տարածքում, Ստեփանավան և Ուրասար բնակավայրերի վարչական տարածքներում:

Լոռու մարզը զբաղեցնում է 3799 քառ. կմ, որն իր մեծությամբ երրորդն է

հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արևելքից՝ Տավուշի, արեւմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները: Լոռու մարզով է անցնում դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ M6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման եւ M3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները, ինչպես նաև մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը:

Մարզում ծովի մակերևույթից ամենաբարձր բարձր կետը Աչքասար լեռան գագաթն է (3 196 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ):




Մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ, ունի ոչ հարթ ռելիեֆ, տարածքի մոտ 80% զբաղեցնում են լեռնաշղթաները և խոշոր լեռները: Նրա տարածքով են ձգվում Զավախքի, Բագումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը:

Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Հարուստ է հիմնականում փայլուն պղնձով: Օգտակար հանածոները ներկայացված են ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ գունավոր մետաղական հանածոներից են նաև արծաթը, մոլիբդենը, ոսկին (շահագործվում է Թեղուտի, Շամլուղի

պղնձի հանքավայրը, Մղարթի եւ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

8. 2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (1-3-րդ գոտիականության): Հատկապես մարզի կենտրոնական մասը (Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան) քաղաքներով առավել զգայուն են 9 և ավելի ուժգնությամբ երկրաշարժերին:



Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության տեղազննվող շրջանը՝ Ստեփանավան քաղաքը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ զրոնտների $A_{max} = 0,4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Մարզում զգալի տարածում ունեն նաև սողանքները, որոնք ներկայացնում են ինչպես առանձին վտանգ, այնպես էլ մեծացնում են սեյսմիկ ռիսկը: Լանդշաֆտի առանձնահատկություններով պայմանավորված մարզի մի շարք համայնքներում առկա են քարաթափումներ:

8. 2.3. Կլիմա և օդային աղաղան

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ, չափավոր ցուրտ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով՝ կայուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը $-3,6^{\circ}\text{C}$ -ից մինչև $+17,5^{\circ}\text{C}$ ամռանը: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 670-700մմ: Նախալեռնային գոտում կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է $-1,5^{\circ}\text{C}$, հունվարինը՝ $-3,6^{\circ}\text{C}$,

ապրիլինը՝ 6.9°C, հուլիսինը՝ 17.5°C, հոկտեմբերինը՝ 8.7°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -30,7°C, բացարձակ առավելագույնը՝ +36,8°C:

Գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի հանրապետության շինարարական նորմեր: Համաձայն նշված փաստաթղթի Ստեփանավան քաղաքի կլիմայական բնութագրերն են.

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ստեփանավան	-3.6	-2.5	1.1	6.9	11.4	14.6	17.5	17.3	13.7	8.7	3.1	-1.5	7.2	-30.7	36.8

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
25. Ստեփանավան	69	70	71	72	76	78	77	75	76	76	74	71	74	69	55	77	62

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16


25. Ստեփանավան	21	27	42	69	114	122	73	56	48	47	34	19	672	143	529
	36	54	37	31	103	63	53	51	41	39	32	30	103		

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %					Ըստ ուղղությունների			Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

32. Ստեփանավան	հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2.8	<վԱրմ	1.6	<վԱրմ	3.9
		2.0	1.3	1.5	2.0	3.0	3.9	2.8	2.2						
	ապրիլ	2	3	11	10	6	25	34	9	45	2.0				
		2.2	1.4	1.6	1.9	2.2	3.1	2.6	2.2						
	հուլիս	2	3	13	10	4	19	39	10	61	1.1				
		1.5	1.1	1.4	1.4	1.4	1.6	1.8	1.5						
	հոկտեմբեր	2	3	12	10	5	24	37	7	59	1.3				
		1.7	1.3	1.4	1.4	1.6	2.2	2.2	2.0						

Քամու վարդն ըստ Ստեփանավան կայանի




ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
26. Ստեփանավա	ժ	133	141	155	151	181	207	189	192	178	156	137	121	1941
ն	օր	6	5	6	6	4	2	5	5	4	5	6	8	62

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Օդային ավազան. Մարզի օդային ավազանը աղտոտող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն են՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը, Թեղուտ ՓԲԸ-ն և այլ խոշոր ու միջին արդյունաբերական ձեռնարկություններ:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների 20 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Ստեփանավան համայնքը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.095 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,033մգ/մ³

- Ածխածնի օքսիդ (CO)՝ 1,1 մգ/մ³

Մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Ուրասար բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

Մթնոլորտային օդն աղտոտումից զերծ պահելու համար անհրաժեշտ է հնարավորինս արագ և սահուն կերպով անցում կատարել դեպի վերականգնվող էներգիայի (արևային, քամու, հիդրո, երկրաջերմային) օգտագործմանը, ինչպես նաև ակտիվացնել անտառտնկման և կանաչապատման աշխատաքների կատարումը:

Ի տարբերություն Լոռու մարզի մի շարք քաղաքների, Ստեփանավան քաղաքը համարվում է մաքուր օդային ավազան ունեցող քաղաք, բացակայում են օդային ավազանը աղտոտող օբյեկտները: Օդային ավազանի աղտոտումը հիմնականում պայմանավորված է ավտոճանապարհներով երթևեկող տրասնպորտային միջոցների արտանետումներով:

Կլիմա Ջերմային կայանների արտադրած էլեկտրաէներգիան կարելի է հեշտությամբ փոխարինել հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրած էլեկտրաէներգիայով: Հայաստանում ջերմային կայանները սպառում են գազ, որի արտանետումները հիմնականում ներառում են CO₂ և NO_x աղտոտիչներ, որոնք նպաստում են գլոբալ տաքացմանը և սմոգի առաջացմանը:

8.2.4. Հողային ռեսուրսներ.

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251052.7հա (Մարզի տարածքի 66%), որից վարելահողերը՝ 42089.4հա (16.8%):



Համաձայն Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 0844.0 հա, որից՝ վարելահող 41977.1 հա: Հողատարածքները կազմում են 9554 հա, որոնց ոռոգման աշխատանքները իրականացվում են 4 մեծ միջտնտեսային ջրանցքների՝ Նալբանդի մեծ ջրանցքի, Կիրովի Լոռու մայր, Այրուի-Ճաճկան մայր ջրանցքների, ինչպես նաև այլ ներտնտեսային ոռոգման ցանցերի միջոցով:

Համաձայն ՀՀ-ում վերաբերյալ հողերի գնահատման աստիճանի, ըստ հողային ծածկույթի գոտիականության, Լոռու մարզը մտնում է Հյուսիս-արևելյան գոտու մեջ, որտեղ 1300-2450մ բարձրությունների վրա գերակշռում են սևահողերը, անտառային գորշ հողերը:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (рН-ը տատանվում է 7-ի սահմաններում): Սևահողերում հումուսի պարունակությունը տատանվում է 6-8% սահմաններում: Հումուսի բաղադրությունում գերակշռում են հումինաթթուները, Շիբ: Շիբ հարաբերությունը հասնում է 1.89-ի:

Տարածաշրջանում կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.18-0.27%), ֆոսֆորական թթվով (0.17-0.23%) և կալիումով (մոտ 1.9%):

Մինչև 900մ բարձրությունների վրա՝ բաց լեռնաշականակագույն հողերը, լեռնանտառային մասերը: Լեռնաշագանակագույն հողերն ունեն ավազային, ավազակավային, կավաավազային մեխանիկական կազմ, խտությունը տատանվում է 1,22-1,26 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,57-2,61 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 51,7-52,7%, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 25,3-29,0% սահմաններում: 900 մ-ից ավելի բարձրությունների վրա ընդգրկում է Լոռու մարզի

լեռնաանտառային մասերը: Հողածածկույթը կազմում են տիպիկ և մուգ լեռնաշագանակագույն ու կարբոնատային լեռնաանտառային դարչնագույն հողերը: Հողերն ունեն ավազակավային, ավազային, կավավազային մեխանիկական կազմ, խտությունը տատանվում է 1,2-1,26 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,61-2,63 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 52,0-54,0 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 26,9-29,0 % սահմաններում:

Գետահովտադարավանդային հողերն ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը հասնում է 1.8-ից մինչև 4.36%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (մոտ 18.4 մգ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Լոռի-Փամբակ գոտու 1500մ և ավելի բարձրությունների վրա գտնվում են մարզի անտառագուրկ տարածքները՝ կարբոնատային և կրաքարե լեռնային սևահողերով: Հողերն ունեն կավավազային և կավային մեխանիկական կազմ, խտությունը տատանվում է 1,18-1,21 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,61-2,62 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,8-54,8 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 34,0-36,7 % սահմաններում:

Լոռի-Փամբակ գյուղատնտեսական գոտում, որի մեջ է մտնում նաև Ստեփանավանի վարչական տարածքը, բաժանվում են լեռնաանտառային (մինչև 1500 մ) և լեռնատափաստանային (1500 մ-ից բարձր) հողատիպերը:

Զքևաղ գետի ավազանի: Հողային ծածկույթը ջրավազանում խայտաբղետ է: Ավազանի վերին հոսանքները լրիվ զբաղված են մերձալպիական, լեռնամարգագետնային դարչնագույն հողերով: Ավազանի միջին մասը զբաղված է լեռնային սևահողերով, խոնավ տափաստանների սևահողերով, որոնք տեղ-տեղ տարալուծված են և հաստ, որտեղ հանդիպում են նաև մարգագետնա-ճահճային հողեր: Ստորին հոսանքներում հողերը ներկայացված են լեռնային չափավոր խոնավ տափաստանների սևահողերով, ածխաթթվային են: Կան նաև թույլ զարգացած փոքր հզորություն ունեցող սևահողեր: Հանդիպում են լեռնաանտառային տափաստանացված հողեր:

Գետի միջին հոսանքից ներքև բուսահողը շագանակա-կարբոնատային է ժայռաբեկորների պարունակությամբ: 1500 մ նիշից ներքև ավազանը ծածկված է հրաբխային ապարների քայքայումից առաջացած գորշ բուսահողով:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

2023 թվականի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռու մարզում: Ուսումնասիրվել են ֆոնային տարածքներ: Լոռու մարզում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-25.0 անգամ, վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-


24.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.5-13.6 անգամ, արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ և մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ: Կապարի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

8.2.5. Ջրային ռեսուրսներ

Լոռու մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով: Մարզի խմելու ջրի աղբյուրները ունեն բարձր որակական հատկանիշներ: Մարզի տարածքում հոսում են 1356 գետեր և գետակներ, որոնք օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով: Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրառատ լեռնային Դեբեդ գետը (154կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ջորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով:

Տարածքը ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային աղբյուրներով: Մարզում առկա է մեկ ջրամբար (Մեծավանի ջրամբար) շուրջ 5 մլն/մ խորանարդ տարողությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Չքնաղ գետի ջրային ռեժիմը ուսումնասիրվել է, գ. Չքնաղ - դ. Ստեփանավան հիդրոլոգիական կայանը, որը ընդունվել է որպես հիմք հետագա հաշվարկների համար:



2025 թվականի 3-րդ եռամսյակում Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ հուլիսին և օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (5-րդ դաս):


Զքնաղ գետ- Զքնաղ գետը հանդիսանում է Ձորագետ գետի աջափնյա վտակը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 26կմ տարածության վրա: Զքնաղ գետն իր սկզբնամասում իրենից ներկայացնում է քիչ մշակված, V-անման ձորակ: Գետը սկիզբ է առնում **Բազումի** լեռնաշղթայից և հոսում է ընդհանուր հարավ-արևելյան ուղղությամբ: Ջրհավաք ավազանի մակերեսը 163կմ² է, գետի երկարությունը՝ 28կմ, ջրավազանի միջին բարձրությունը՝ 1990մ, գետի միջին թեքությունը՝ 35‰:

Զքնաղ գետը պատկանում է այն լեռնային ջրահոսքերի տիպին, որոնք ունեն խառը սնուցում, սնուցման հիմնական աղբյուրը հանդիսանում է ձնհալի ջրերը: Սնուցման համար կարևոր դեր են խաղում գրունտային և անձրևային ջրերը: Ամեն տարի Զքնաղ գետը վերին հոսանքներում սառցապատվում է կայուն սառցաշերտով, որը միջինը տևում է 50-60օր, ձմռանը սառցաշերտի հաստությունը հասնում է 5-10սմ:

Հունիսից ոռոգման նպատակով սկսվում է ինտենսիվ ջրաբաշխում: Առանձին տարիներին սեպտեմբերին գետում հայտնվում են ափասառույցներ: Ցուրտ ձմեռներին գոյանում են սառցապատումներ: Սառցագոյացումը դիտվում է նոյեմբերի կեսերին և պահպանվում է մինչև մարտի կեսերը, որից հետո հալվում է տեղում: Վերին հոսանքներում, ինչպես նաև հովտի միջին հոսանքներում, կուտակվում է ձյուն: Ջրի որակը լավն է, մաքուր, թափանցիկ, որը պիտանի է խմելու և տեխնիկական նպատակների համար: Այն կեղտոտվում է միայն գարնանային հորդացումների ժամանակ՝ զգալի քանակությամբ ջրաբերվածքների հետևանքով: Գետավարարման հոսքի ձևավորումը կախված է ոչ միայն ջրհավաքի բարձրությունից, այլև հզորությունից և ձյան ծածկույթի ժամկետներից: Ամենախոնավ գոտին 2700-3300մ է:

Չքնաղ գետի դիտարկումների ժամանակ ջրի մակարդակի առավելագույնը կազմել է 158սմ, իսկ տարվա համար՝ 146 սմ: Աշնանային մակարդակը կախված անձրևներից ոչ նշանակալի է: Ամառային և աշնանային ժամանակաշրջանում մակարդակը կայուն է, չնայած ոչ հաճախ տեղում են կարճատև անձրևներ: Ձմեռային մակարդակը շատ կայուն է:

Ջորագետ գետի հիդրոլոգիական պայմանները նշված օրերին: Վտանգավոր ելքեր չեն գրանցվել:




8.2.6. Կենսաբազմազանություն

Ըստ Ա. Լ. Թախտաջյանի՝ ՀՀ տարածքի հյուսիսային հատվածն ընկած է Կովկասյան բուսաաշխարհագրական մարզի տարածքում, որտեղ բնորոշ են բուսականության մեզոֆիլ (խոնավասեր) տեսակները:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր

պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար:

Համաձայն Լոռու մարզի 2017-2025թթ. ռազմավարական զարգացման ծրագրի՝ մարզում գերակշռում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205հա, որից անտառածածկ է 86 հազ. հա: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները: Հրդեհները բացասաբար են ազդում մարզի բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:




Հայաստանի Հանրապետության համար էկոհամակարգերը հանդիսանում են մարդկանց բարեկեցության և երկրի տնտեսական զարգացման հիմքը՝ ապահովելով բնակչության սննդի, մաքուր օդի, ջրի առկայությունը և այլ կարիքները: Ուստի էկոհամակարգերի պահպանումը և վերականգնումը կարևոր պայման է մարդու առողջության և կլիմափոփոխության պահպանման համար:

Բուսական աշխարհ. Ըստ Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954) նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Լոռու ֆլորիստիկ

շրջանում, ուր բուսականությունն աչքի է ընկնում համակեցությունների բազմազանությամբ, տեսակային հարուստ կազմով: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ: Լոռու մարզը հարուստ է անտառներով, որի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ: Ջրավազանի բուսականությունը հարուստ է: Վերին հոսանքներում տարածված են ներքին ալպիական մարգագետինների խալիների և խիտ ճիմանային գոյացումների համալիրով: Ավազանի միջին մասերում շատ տեղ է գրավում մարգագետնային տափաստանը և տեղ-տեղ բոշխային ճահիճներն ու ճահճացված մարգագետինները: Ավազանի ստորին մասերում տարածված են հացահատկային և բազմախոտ-հացազգի տափաստաններ՝ տեղ-տեղ տրազանտային տարրերով: Չքնաղ գետը իր սկզբնամասում իրենից ներկայացնում է քիչ մշակված, V-անման ձորակ: Վերին հոսանքներում հովտի լանջերի թեքությունը 15 - 200 է, իսկ բարձրությունը՝ 100 - 150մ, որոնք աննկատելիորեն ձուլվում են շրջակա լեռնային տեղանքի հետ: Հովտի լայնությունը վերին մասում 200 - 300մ է: Լանջերը ծածկված են ալպիական և մերձալպիական մարգագետիններով:

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և գործողությունների պետական ծրագրի»՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից Լոռու մարզում հաշվառված է 47 տեսակ, էնդեմիկների քանակը՝ 7: Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Լոռու մարզի սարահարթի մարգագետիններում առկա են ճահճային գոտիներ: Մարզի ֆլորիստիկական շրջանում առկա 1280 տեսակի մարգագետիններ, անտառներ, ջրաճահճային տիպերը:





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մարգագետնատափաստանային բուսականություն
- 2 - Անտառային բուսականություն
- 3 - Տափաստանային տարախոտահացահատիկային բուսականություն
- 4 - Հիդրոֆիտ բուսականություն

Լոռու մարզի անտառների հիմնական ծառատեսակներն են՝ սոճին, կաղնին, թխկին, կեչին, ուռենին, բարդին, հարուստ է ծառատեսակներով (մոտ 60 տեսակի ծառ, 90 տեսակից ավելի թուփ): Անտառի հիմնական ծառատեսակը հաճաբենի արևելյանն (*Fagus orientalis* Lipsky) է, կաղնի արևելյան (*Quercus macranthera* Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացական (*Q. iberica* Stev.), թխկի վրացական (*Acer ibericum* M. Bieb.), լոբենի կովկասյան (*Tilia caucasica*), բոխի սովորական (*Carpinus betulus* L.): Տարածաշրջանի բնական բուսածածկի տիպերից հանդիպում են՝ ամենուրեք Բանգի սև (*Hyoscyamus niger*), Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*), Ոգնագլխիկ սովորական (*Echinops ritro*), Անանուխ Երկարատերև (*Mentha longifolia*), Եղինջ երկտուն (*Urtica dioica*), Կատվալեզու եռաբաժան (*Bidens tripartita*), Ջղախոտ մեծ, Ջղախոտ նշտարաձև (*Plantago major*, *Plantago lanceolata*), Ավելուկ գանգուր (*Rumex crispus*), Երեքնուկ կարմիր Երեքնուկ սողացող (*rntblum hybridum*, *Infolium repens*), Չիաձետ դաշտային (*Equisetum arvense*), Սրոհունդ խոցված (*Hypericum perforatum*), Դանդուռ բանջարանոցային (*Portulaca oleraceae*), Իշառվայա դեղատու (*Melilotus officinalis*), Ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*), Տերեփուկ կապույտ (*Centaurea cyanus*), Մոշենի թխակապույտ (*Rubus caesius*), Խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis*), Մասրենի շնային (*Rosa canina*), Ուրց Կոչիի (*Thymus kotschyanus*), Սիբեխ սովորական (*Falcaria vulgaris*), Ծոսապաշար սովորական (*Capsella bursa pastoris*), Մատիտեղ պարսկական (*Polygonum persicaria*), Օշինդր դառը (*Artemisia absinthinum*), Փիփերթ արհամարհված (*Malva neglecta*), Մատիտեղ թոչնային (*Polygonum aviculare*) և այլն:

Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի

լեռնաշղթաների (Վիրահայոց, Բագումի, Փամբակի և Գուգարաց) զառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը: Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (*Stipa pennata* L.), սեզ սողացող (*Elytridia repens* L.), դաշտավուկ մարգագետնային (*Poa pratensis* L.), շյուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis* Huds.), կծմախոտ (*Bothriochloa ischaemum* L.), չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազ ասեղնային (*Astragalus picnophyllus* Stev.) և զանազան թփերը, մացառները:

Լոռու ֆլորիստական շրջանի սևահող ալրային կարբոնատային հողերի վրա զարգացած է տափաստանային բուսականության բնորոշ բուսատեսակները՝ տարախոտա-հացազգային տեսակների մասնակցությամբ:

Դեղաբույսերից տարածում ունեն առյուծագի արտային (*Leonurus cardiaca*) և դրախտածառ (*Cotinus coggygria*):

Դեղաբույսերից տարածում ունեն ազնվամորի սովորական (*Rubus idaeus*), բոինչ սովորական (*Viburnum opulus*), գետնամորի անտառային (*Fragaria vesca*), նոնենի սովորական (*Punica granatum*), ջրապղպեղ (*Polygonum hydropiper*), խնկածաղիկ սովորական (*Origanum vulgare*), կստկենի սև (*Sambucus nigra*), մանուշակ դաշտային (*Viola arvensis*), տատրակ (*Tussilago farfara*):

ՀՀ Կարմիր Գրքում գրանցված են պահպանության կարիք ունեցող ֆլորայի 327 տեսակ, որոնցից են՝ Բանպոտ Բրաունի (*Polystichum braunii*), Նետախոտ նետախոտանման (*Sagittaria sagittifolia* L), Պսեֆելլուս դեբեդի (*Psephellus debedicus*), Բոշխ բոհեմական (*Carex bohémica* Schreb), Թրաշուշան Ջավախքի (*Gladiolus dzhavakheticus* Eristavi), Ջրաշուշան սպիտակ (*Nymphaea alba* L.), Սրտավարդ Կովկասյան (*Rhododendron caucasicum* Pall.), Ճոճռուկ մազոտ (*Cerastium capillatum*), Հիրիկ Սիբիրյան (*Iris sibirica* L), Նեղտերև Դոդոնի (*Chamaenerion dodonaei*), Սոխ Օլթի (*Allium oltense* Grossh), Սոխ ժայռի (*Allium rupestre* Steven), Թաղաղու Ղրիմյան (*Asphodeline taurica* (Pall.) Kunth) և այլ տեսակները:

Մնկերից՝ Հովանոցասունկ աղջկական (*Macrolepiota puellaris*), Թիակիկ սովորական (*Ithyphallus impudicus*), Աստերոֆորա անձրևային (*Asterophora lycoperdoides*), Ճանճասպան կարմիր (*Amanita muscaria*), Կոնասունկ փաթիլատիկ (*Strobilomyces strobilaceus*) և այլն:

Զքնաղ-1 ՓՀԷԿ-ի տարածքի բուսականությունը հարուստ չէ, տարածված են հիմնականում տափաստանային խոտաբույսեր:



Կենդանական աշխարհ. Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և բնության տարրերի բազմազանության, Լոռին առանձնանում է իր կենդանական աշխարհի բազմազանությամբ: Լոռու կենդանական աշխարհի շատ տեսակներ ընդհանուր են այլ մարզերի համար: Սակայն հանդիպում են նաև կենդանիների այնպիսի տեսակներ, որոնք հատուկ են միայն Լոռու մարզին: Լեռնատափաստանային գոտու կենդանական աշխարհը բնորոշ է հատկապես կրծողներով, որոնցից լան տարածում ունեն՝ դաշտամուկը (*Arvicolinae*), ճագարամուկը (*Dipodidae*), կույր մուկը (*Mus caecus*), համստերը (*Cricetinae*): Տարածված են նաև կզաքիսը (*Saltus martes*), գետնասկյուռը (*Spermophilus citellus*), գորշ գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes*): Թռչուններից տարածված են՝ բաղը (*Anatidae*), գորշ կաքավը (*Perdix cinerea*), շիկահավը (*Erithacus rubecula*), ճնճուկը (*Passeridae*), լորը (*Coturnix*), կաքավը (*Perdix*), արտույտ անտառային (*Lullula arborea*), ծիծեռնակը (*Hirundinidae*), կաչաղակը (*Pica*), արծիվը (*Aquila*), բազեն (*Falco*) և այլն:

Մերձալպյան և ալպյան գոտին ունի աղքատ կենդանական աշխարհ, պայմանավորված բնակլիմայական աննպաստ պայմաններով: Այստեղ հանդիպում են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ՝ աղվես, գայլ, նապաստակ (*Leporidae*), աքիս (*Mustella nivalis*), դաշտամուկ սովորական (*Arvicolinae peculiaris*), քարաբնակ կզաքիս (*saltus martes*): Կաթնասուններից հանդիպում են գայլ, աղվես, քարակզաքիս, ջրային առնետ, թռչուններից՝ կոնչան բադ, սուլող մրտիմն, չքչքան մրտիմն, կարմրագլուխ սուզաբադ, փոփուլավոր սուղաբադ, սևփարփար, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ, տնային ճնճուկ, մոխրագույն ագռավ: Երկկենցաղներից տարածված է լճագորտը, փոքրասիական գորտը, ձկնատեսակներից՝ լոքոն, կարմրախայտը, կարասը:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից Լոռու մարզում գրանցված են 54 տեսակ, որից անողնաշարավոր կենդանիներ՝ 7, ողնաշարավոր կենդանիներ՝ 47: Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Ստեփանավանյան առվակային գնայուկ (*Duvalius stepanavanensis* Khnzorian), Մթնաշաղային կապտաթիթեռ (*Maculinea nausithous*), թռչուններից՝ Գառնանգղ (*Մորուքավոր անգղ*)/*Gypaetus barbatus*), Գիշանգղ (*Neophron percnopterus*), Սպիտակագլուխ անգղ (*Gyps fulvus*), Փոքր ենթարծիվ (*Aquila pomarina*), Վայրի հնդկահավ (*Ուլար*) (*Tetraogallus caspius*), Մոխրագույն կոռնկ (*Grus grus*), Ներկարար (*Coracias garrulus*), Կովկասյան մաքեհավ (*Tetrao mlokosiewiczi*), Տարգալակտուց (*Platalea leucordia* Linnaeus), կաթնասուններից՝ Շելկովնիկովի կուտորա (*Neomys schelkovnikovi* Sat.), Գորշ արջ (*Ursus arctos* Linnaeus), Անտառակատու (*Felis silvestris* Schreber), Փոքրասիական գետնասկյուռ (*Spermophilus xanthoprymnus* Bennet) և այլն: Էնդեմիկ տեսակ է հայկական ծղրիդ (*Montana armeniaca* Rme), սողուններից՝ Դալի մողես (*Darevskia dahli*), Սպիտակ խխունջ (*Gyraulius albus*), Փոքրասիական մողես (*Parvilacertaparva* Boulenger), Սպիտակափոր մողես (*Darevskia unisexualis*), Հայկական լեռնատափաստանային իծ (*Vipera (Pelias) eriwanensi*) և այլն: Լոռու սարահարթի լճակներում հանդիպում է մոխրագույն սուզակ, որը քիչ տարածված և

կրճատվող տեսակ է:

Դեբեդ գետի ավազանին պատկանող ջրակալներում հանդիպում են կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi*, Կուրի կողակը *Capoeta capoeta capoeta*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, մուրծին *Luciobarbus mursa*, քառթակը *Gobio sp.*, Կուրի լերկաձուկը *Oxynoemacheilus brandtii*, արծաթաձկնիկը *Leucaspis delineatus*, բրամը *Abramis brama*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*, նաև տարբեր ձկնային տնտեսություններից հաճախ այստեղ ներթափանցող ծիածանախայտը *Parasalmo mykiss*, երբեմն՝ կարպը *Cyprinus carpio*: Վերոգրյալ ձկնատեսակներից շատերը հանդիպում են Ձորագետի ու Փամբակի միախառնման տեղում և Ձորագետի հունով բարձրանում են դեպի հոսանքն ի վեր:



Նկար 11. Անտառակատու



Նկար 12. Տարգալակտուց

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

8.2.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.

Լոռու մարզում առկա են ընդհանուր՝ 6944հա մակերեսով 3 արգելավայրեր՝ «Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»: Առկա է 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ:

- Գյուլագարակի ռելիկտային սոճու անտառներ
- Մարգահովիտի մեզոֆիլ անտառներ
- Մրտավարդենու (ռելիկտային մրտավարդի կովկասյան տեսակը)
- Վանաձորի բուսաբանական այգի
- Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ
- Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկ:

Գյուլագարակի արգելավայրը/2576հա/ ստեղծվել է 1958 թվականին մնացուկային սոճու անտառների պահպանության նպատակով: Գտնվում է Լեջան լեռնազանգվածի հարավային լանջին, ծովի մակարդակից 1300-1850 մ բարձրություններում:

Մարգահովիտի արգելավայրը/3368 հա/ստեղծվել է 1971 թ.՝ խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի (այծյամ, գորշ արջ, կովկասյան մայրեհավ և այլն)

պահպանության նպատակով: Գտնվում է Աղստև գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրություններում:

Կովկասյան մրտավարդենու պետական արգելավայրը /1000 հա/ստեղծվել է 1959թվականին՝ կովկասյան մրտավարդենու մնացուկային թփերի պահպանության նպատակով: Գտնվում է Փամբակի լեռնաշղթայի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսային լանջերին՝ Աղստև գետի աջափնյակում՝ ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրություններում:

Շրջակա միջավայրի նախարարի 10.08.2023թվականի N278-Լ հրամանով Մարգահովտի և Կովկասյան մրտավարդենու պետական արգելավայրերը միավորվել են և համատեղ տարածքը կազմում է 3124 հա:

Ուրասարի կամ Զրաշուշանների լիճը գտնվում է Ուրասար գյուղից 1.2 կմ հյուսիս-արևելք: Լճում ծաղկում է սպիտակ ջրաշուշանը (*Nymphaea alba* L), որը Հայկական լեռնաշխարհի ամենագեղեցիկ բույսերից է, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և կարգավորվում է նաև ՀՀ օրենսդրությամբ:

Հայցվող տարածքից «Գյուլագարակ» պետական արգելավայրը և Դենդրոպարկը գտնվում են 5- 9 կմ հեռավորությունների վրա:

8.2.8. Պատմամշակութային հուշարձաններ.

Լոռին առանձնահատուկ է իր գեղատեսիլ բնությամբ եւ հարուստ պատմամշակութային ժառանգությամբ եւ համարվում է Հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի հուշարձաններ ու կոթողներ, որոնցից են հայաստանյան խոշորագույն և նշանավոր Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, որոնք ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում, ինչպես նաև Սուրբ Հովհաննես վանքն՝ Արդվիում, Կուրթանի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Ախթալայի եկեղեցին և ամրոցը, Ալավերդու միջնադարյան կամուրջը և այլն: Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշմամբ սահմանվում է Ստեփանավան քաղաքի վարչական տարածքի հուշարձանների ցանկը:

Ստեփանավան քաղաք

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 4-3 հազ.	քաղաքից 1 կմ ամ	<	1
2			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	Արմանիս-Կաթնաղբյուր ճանապարհին, բլրակի վրա	<	2
	2.1		Բնակատեղի «Օրան - Լոռե»	Ք.ա. 2-1 հազ.	Տաղեր և Դեղն գետերի միացման կետից ամ, «Բուզեր» վայրում	<	2.1

3		ԲՆԱԿԱՎԱՅՐ	10-13 դդ.	քաղաքի ամ եզրին, Օրան Լոռե գետի ձախ ափին, «Գալոյի բոստանի» դիմաց	<	անձավային (3)
4		ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 1.5 կմ ամ, «Աչաջուր» տեղանքում	<	4
5		ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՉԵՉՄԱՆԻՍ»	Ք.ա. 4-1 հազ.	քաղաքի ամ եզրին, բլրի գագաթին	<	5
	5.1	Դամբարանադաշտ «Չեչմանիս»	Ք.ա. 13-9 դդ.	բնակատեղիում, խճուղու շրջակայքում	<	5.1
6		ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10-11 դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Ձորագետի կիրճում	<	6
7		ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	12-13 դդ.	անտառտնտեսության տարածքում, Պրիվոլնոյե-Ախքյորփի ճանապարհից ձախ	<	7
	7.1	Մատուռ	12-13 դդ.	գերեզմանոցում	<	7.1
8		ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	12-17 դդ.	քաղաքից ամ, «Գալոյի բոստան» վայրում, բլրի վրա	<	8
9		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	քաղաքի ամ կողմում, Տաշիր գետի ձորում	<	9
10		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱԶԱԶՈՒՐ»	5-17 դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Ձորագետի կիրճում	<	10
	10.1	Եկեղեցիներ	4-13 դդ.		<	2 հատ (10.1-10.2)
11		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՕՐԱՆ - ԼՈՌԵ»	12-17 դդ.	քաղաքից ամ, հրվանդանի վրա	<	11: Ենթակայությանը ներկայացված է ևս 1 հուշարձան (11.4)
	11.1	Գերեզմանոց	15-17 դդ.	Կաթնաղբյուրի ճանապարհին	<	11.1
	11.2	Եկեղեցի «Օրան - Լոռե»	12-13 դդ.	քաղաքից ամ	<	11.2
	11.3	Ջանգակատուն	19 դ.	Եկեղեցու մոտ	<	11.3
12		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքի ամ մասում, «Գալոյի բոստան» կոչվող բլրի վրա	<	12
13		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 1 կմ ամ, Արմանիս-Կաթնաղբյուր խճուղու մոտ	<	13

14		ՂԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 2 կմ հվ-ամ, Ստեփանավան-Տաշիր խճուղուց աջ, լճերի մոտ	<	14
15		ԵԿԵՂԵՑԻ	10-11 դդ.	քաղաքի ամ մասում	<	15
	15.1	Գերեզմանոց	10-19 դդ.	Եկեղեցու շրջակայքում	<	15.1
16		ԵԿԵՂԵՑԻ «ՉԻՉՄԱՆԻՍ»	5-6 դդ.	քաղաքի ամ եզրին	<	16
	16.1	Գերեզմանոց	17-18 դդ.	քաղաքի ամ մասում, Եկեղեցու շուրջը	S	16.1
	16.2	Խաչքարեր	12-13 դդ.	Եկեղեցու մեջ և պատերին	<	3 հատ (16.2-16.4)
17		ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	թիվ 51866 գին. մասի տարածքում	<	18
18		ԽԱՉՔԱՐ	1210 թ.	թիվ 51866 գին. մասի տարածքում	<	19
19		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ	1969 թ.	քաղաքի մեջ	S	21
20		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ	1982 թ.	քաղաքի մեջ	S	22
21		ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ	1978 թ.	քաղաքի կենտր. հրապարակում	<	23
22		ՄԱՏՈՒՌ	12-13 դդ.	քաղաքի ամ մասում, Ձորագետի ձախ ափին	<	Ժայռափոր (25)
23		ՄԱՏՈՒՌ	12-13 դդ.	քաղաքի ամ մասում, Ձորագետի ձախ ափին, «Գալոյի բոստան»-ի դիմաց	<	26
24		ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՆՇԱՆ	1871 թ.	քաղաքից 2 կմ ամ, Արմանիսի ճանապարհին	<	27: Ենթակայությանը ներկայացված է 8 հուշարձան (27.1-27.8)
25		ԶՐԱՆՑՔ	17-19 դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Ձորագետի կիրճում	S	28
26		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքի հվ մասում, «Մայրի ծոր»-ում	<	30
27		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	10-11 դդ.	քաղաքից հս-աե, կիրճում	<	31

28			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	Ք.ա. 2-1 հազ.- միջնադար	քաղաքի ամ մասում	<	32: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 2 հուշարձան (32.1-32.2)
----	--	--	------------------------------------	-------------------------------	------------------	---	---

Ուրասար գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ - ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս-աե	<	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղիի շուրջ	<	1.1
2			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 3-1 հազ.	Ստեփանավան- Ուրասար ճանապարհի աջ կողմում, Սև գետի աջ ափին	<	2
	2.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 3-1 հազ.	Ստեփանավան- Ուրասար ճանապարհի երկու կողմում, գյուղի աե եզրին	<	2.1
3			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	գյուղի մեջ	S	4
4			ԶՐԱՂԱՑ	19 դ.	գյուղի աե մասում, Սև գետի ձախ ափին	S	5

8.2.9. Բնության հուշարձաններ.

Մարզը հարուստ էն բնական հուշարձաններով:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան Անձնագրված են 9 բնության հուշարձան՝ 165 հա ընդհանուր մակերեսով:

9 բնության հուշարձաններից 4-ը՝ երկրաբանական է, 3-ը՝ ջրագրական, 1-ը բնապատմական և 1-ը՝ կենսաբանական:

	Երկրաբանական հուշարձաններ	
8	«Բազալտանման ապարների (Դիաբազների) զոլավոր դայք»	Լոռու մարզ, Ալավերդի քաղաքային համայնք, Լավվար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
29.	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Զորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա

30.	«Ձորագետի հրային ներժայթուկ»	Լոռու մարզ, Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
31.	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Լոռու մարզ, Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
	Զրագրական հուշարձաններ	
	«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Մեծ Պատնի գյուղական բնակավայր, Զիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
7.	«Դսեղի Ծովեր» լիճ	Լոռու մարզ, Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիդաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում
8.	«Շամլուղի լճակ»	Լոռու մարզ, Շամլուղ գյուղական բնակավայր
	Բնապատմական հուշարձաններ	
6.	«Օձի պորտ»	Լոռու մարզ, Արդվի գյուղական բնակավայրի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք
	Կենսաբանական հուշարձաններ	
5.	«Քոշաքարի մրտավարդ»	Լոռու մարզ, Մարգահովիտ գյուղական բնակավայրի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գտնում

Նախատեսվող գործունեության տարածքում չկան բնության հուշարձաններ: «Գետնանձավ» անձավային թունել երկրաբանական հուշարձանը գտնվում է 6.7-13,2 կմ հեռավորության վրա:

8.2.10. Սոցիալական

Լոռու մարզի բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-1800մ բարձրության վրա: Մարզն ունի 16 համայնքներ, 8 քաղաքներ (Վանաձոր, Տաշիր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Թումանյան, Ախթալա, Շամլուխ), 120-ը՝ գյուղական բնակավայրեր: Բնակչության տեղաբաշխվածությունը հիմնականում միջպետական ճանապարհների երկայնքով: Մարզի լեռնային տարածքները նոսր են բնակեցված: Բնակչության հիմնական մասը հայեր են(97%), բնակվում են նաև ռուսներ, հույներ, եզդի, քուրդ, ասորի և այլ ազգերի երկայացուցիչներ:



Համաձայն Վիճակագրության կայք էջի՝ 2025թ. տարեկգրի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 229,2հազ. մարդ:

Ներկայացվում է մարզի ներկա վիճակն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կայք էջի:

Տարածքը Territory	3 799 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	12.8
Համայնքներ, 2025 թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of the year, 2025	11
Քաղաքներ Towns	8
Գյուղեր Villages	121
Բնակչության թվաքանակը 2025թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2025	229.2 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	127.8 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	101.4 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2024թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2024, %	7.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2024թ., % Share of urban population size 2024, %	55.8
Գյուղատնտեսական նշանակության հողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ Agricultural land, as of July 1, 2023	250 793.1 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ including: arable land, as of July 1, 2023	41 927.0 հա/ ha

Գյուղատնտեսական նշանակության հողերը 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում են 250.793.1 հա, որից վարելահողերը՝ 41927.0հա:

2024թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 4.9 %,
- գյուղատնտեսություն 8.8 %,
- շինարարություն 4.9 %,
- մանրածախ առևտուր 2.3 %,
- ծառայություններ 1.1 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու

արդյունաբերությունն են:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունները հանքագործական, մշակող (մասնավորապես՝ մետաղագործական), սննդի և թեթև արդյունաբերություններն են: Մարզում առկա են մետաղական հանքավայրեր (պղինձի, ոսկու, մոլիբդենի, բազմամետաղների, ֆելզիտային և դացիտային տուֆեր, հանքային ջրեր և այլն):

Գյուղատնտեսության ճյուղերից մարզում զարգացած է գյուղացիական, հողագործական, թռչնաբուծական, անասնաբուծական տնտեսությունները, մեղվաբուծությունը, կաթի, պտուղ-բանջարեղենի հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսերի վերամշակումը, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Արագ զարգանում է զբոսաշրջության ոլորտը:

Մարզն ապահովված է փոստային, բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով: Մարզում գործում են ընդհանուր 64.3ՄՎտ հզորությամբ 24 ՓՀԷԿ-եր, Պուշկինի լեռնանցքում՝ ծովի մակարդակից 2038մ բարձրության վրա կառուցվել է 2,64 ՄՎտ ընդհանուր հզորությամբ «Լոռի-1» հողմակայանը:

Մարզում առկա է ջրամատակարարման և ջրահեռացման կենտրոնացված համակարգերը, որից մասնակի մաքրում իրականացվում է միայն Վանաձոր քաղաքում, կեղտաջրերի մեծ մասը առանց մաքրման անմիջապես թափվում է Փամբակ գետը: Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ ձեռով, չկան պահանջվող նորմերին համապատասխան աղբավայրեր, չկան նաեւ աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգեր (բացառությամբ Ալավերդի քաղաքի):

Մարզի ոչ բոլոր համայնքներն են գազիֆիկացված:

Մարզի հիմնախնդիրներից է ճանապարհային ցանցի, ինչպես նաև հանդամիջյան ճանապարհների անբավարար վիճակը, միջհամայնքային ճանապարհների լուսավորությունը, գործազրկությունը բարձր է:

Ստեփանավան քաղաքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ գտնվելով մարզի կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Քաղաքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում: Համաձայն վիճակագրության կայք էջի՝ ընդհանուր տարածքը կազմում է 1.666հա: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմում է 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ: Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ՄՅ ավտո մայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ - տնտեսական նշանակություն: Ստեփանավանից են սկսում 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-

Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր: Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա է գտնվում Ստեփանավանի օդանավակայանը: Համայանքը ներառում է ք. Ստեփանավանը, Ուրասար և Կաթնաղբյուր գյուղերը:

Համաձայն Վիճակագրության Կոմիտեի կայք էջի՝ Ստեփանավան քաղաքի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 139կմ, մարզկենտրոն՝ Վանաձորից՝ 24կմ, պետական սահմանահից ուղիղ գծով՝ 20կմ: Ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1375մ: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 683մմ, հունվար ամսվա օդի միջին ջերմաստիճանը՝ $-4,2^{\circ}\text{C}$, հուլիսինը՝ 16.7°C :

Իր չափավոր խոնավ կլիմայով, սառնորակ աղբյուրներով, գեղեցիկ բնությամբ, մաքուր օդով, բնական, պատմական և մշակութային հուշարձաններով հանրապետությունում հայտնի է որպես ամառանոցային քաղաք: Գտնվում է ծովի մակերևույթից 1500-1600 մետր միջին բարձրության վրա: Բնակչության հիմնական մասը ներկայումս զբաղված են գյուղատնտեսությամբ, առևտրով և սպասարկման ծառայություններով: Տարածաշրջանում պատմամշակութային կոթողների առկայությունը, էքստրեմալ և պասիվ հանգստի պայմանները, Գյուլագարակի դենդրոպարկը, «Լոռի» բերդամրոցը, Հնեվանք վանական համալիրը (10-14-րդ դդ.), Սբ. Նշան մատուռը համայնքում գործող 6 առողջարաններն և հանգստյան գոտիները, կարևոր խթան են հանդիսանում տուրիզմի և զբոսաշրջության զարգացման համար:

Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ Ստեփանավան քաղաքի տարածքը կազմում է 1 666հա, բնակչությունը 2025թ. սկզբի դրությամբ կազմում է 12.2 հազ.մարդ: Բնակչությունը զբաղվում է սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրության ոլորտներում: Համաձայն Ստեփանավանի համայնքապետարանի կայք էջի՝ համայնքում առկա են հանրակրթական դպրոցներ՝ 9 հատ, նախադպրոցական հիմնարկներ՝ 5 հատ, երաժշտական դպրոց՝ 1 հատ, արվեստի դպրոց՝ 1 հատ, գրադարան՝ 1 հատ, մարզադպրոց՝ 1 հատ, բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 1 հատ, միջին մասնագիտական՝ 2 հատ: 2018թ. դրությամբ համայնքի հողային ֆոնդը կազմում է 20933,4հա, որից գյուղնշանակության հողերը՝ 18110,4հա: Համայնքը գազիֆիկացված է, ունի աղբավայր: Հիմնախնդիրներից են՝ ենթակառուցվածքների(ճանապարհներ, ջրամատակարարման համակարգեր), զբոսայգու, մանակապարտեզի հիմնանորոգումը, փողոցների գիշերային լուսավորության ասպառակումը, գերեզմանատան ցանկապատումը:

Ուրասար բնակավայր. գյուղն Ուրասար անվանումը ստացել է Բագումի լեռնաշղթայի ամենաբարձր սարի անունով, որի գագաթին ծվարում են ուրուրները: Այժմ Ուրասար բնակավայրը մտնում է Ստեփանավան համայնքի կազմի մեջ, Ստեփանավան քաղաքից մոտ 7 կմ արևմուտք, Ձորագետի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1525 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33 կմ հյուսիս-արևմուտք: Գտնվում է ցուրտ կլիմայական գոտում, ձմեռը ցուրտ, ամառը՝ զով: Բնակավայրի վարչական տարածքը կազմում է 4514.18հա, որից գյուղնշանակության հողերը կազմում են 4161.4հա: Սահմանակից է Կաթնաղբյուր և Արմանիս բնակավայրերին: Ունի միայն 1 հանրակրթական դպրոց: Բնակավայրը 2023թ. դրությամբ գազիֆիկացված չէ, ունի գերեզմանոց:

Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ: Համաձայն վիճակագրական կայք էջի՝ 2025թ հունվարի դրությամբ Ուրասարի առկա բնակչությունը կազմում է 343 մարդ:

Բնակավայրի հիմնախնդիրներից են աղբավայրի, գազիֆիկացման, երեխաների համար խաղահրապարակների բացակայությունը: Ենթակառուցվածքները՝ ճանապարհներ, ջրամատակարարման համակարգերը գտնվում են վատ վիճակում, ունեն վերանորոգման կարիք:

9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը

ՇՄԱԳ-ի շրջանակներում դիտարկվել է նախատեսվող գործունեության զրոյական, այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

Այլընտրանքային (վերականգնվող) էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուր են հանդիսանում փոքր ՀԷԿ-երը (ՓՀԷԿ) «Հայաստանի Փոքր հիդրոէներգետիկայի զարգացման սխեման» ներգրավում է 325 ՓՀԷԿ՝ 274 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և 833 մլն կՎտ.ժամ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ:

Ամբողջությամբ հանրապետության տնտեսական պոտենցիալը (հզորությունը) կազմում է մոտ 3.2 մլրդ կՎտ.ժամ, որից մոտ 1.6մլրդ կՎտ.ժամ արդեն իրացված են: Փոքր ՀԷԿ-երի կառուցումն ու շահագործման մեջ մտցնելը թույլ կտա նաև զգալիորեն թեթևացնել էներգահամակարգի բեռնվածությունը: Միաժամանակ կբարձրանա նրա անկախության և անվտանգության մակարդակը: Հայաստանում փոքր հզորության ՀԷԿ-երի կառուցման գործընթացը համարվում է որպես վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն, քանի որ այն կնպաստի Հայաստանում էներգետիկ անկախության հաստատմանը:

Փոքր ՀԷԿ-եր են համարվում մինչև 30 ՄՎտ ընդհանուր հզորությամբ բոլոր տիպի հիդրոէլեկտրակայանները:

Զրոյական տարբերակ նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում, որի արդյունքում.

- չի արտադրվի 17.740մլն.կվտ.ժ էլեկտրաէներգիա, որի արդյունքում նշված քանակի էլեկտրաէներգիայի արտադրությունը ընկնելու է շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող՝ գազի կամ այլ աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիա արտադրողների վրա,
- նշված քանակի էլեկտրաէներգիայի արտադրությունը այլ աղբյուրների հաշվին կառաջացնի շրջակա միջավայրի, հատկապես օդային ավազան գազերի տեսքով արտանետումների ավելացմանը, որն էլ կհանգեցնի հնարավոր կլիմայական փոփոխությունների առաջացմանը,
- չեն ստեղծվի նոր աշխատատեղեր բնակչության համար, որը կարևոր է

բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացման համար: Չեն կատարվի տնտեսության ոլորտում ներդրումներ,

Գործունեության չիրականացման դեպքում էներգոհամակարգի բեռնվածությունը չի թեթևանա, Հայաստանի էներգետիկ անկախությունը կարող է վտանգվել: Էլեկտրաէներգիայի համալրումը այլ աղբյուրներից /ՋԷԿ, ՊՇԷԿ և այլն/ կարող է զգալի և անդառնալի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, մասնավորապես օդային ավազանի, կլիմայի վրա:

Տարածքի այլընտրանք: ՓՀԷԿ-ի կառուցվածքների տեղի ընտրության նպատակահարմարությունը կայանում է նրանում, որ տեղանքը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել տեղանքում առկա հնարավորությունները՝ արդյունքում ունենալով պատվարային ջրընդունիչի, դերիվացիոն խողովակաշարի, ՓՀԷԿ-ի շենքի, տրանսֆորմատորային ենթակայանի, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի օպտիմալ համադասավորություն: Աշխատանքներն իրականացնելու համար առկա են անհրաժեշտ բոլոր տրանսպորտային ճանապարհները:

Այլ տեղանքներում ՀԷԿ-ի կառուցման արդյունավետ հնարավորություն չի գտնվել, որը կապահովեր համապատասխան հարթություն, ճանապարհներ, դերիվացիոն խողովակաշարի երկարության հնարավոր կարճացում, ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործում: Ուստի ընտրվել է ՀԷԿ-ի կազմակերպման հնարավորությունների արդյունավետ տարբերակը:

Ընտրված տարբերակի հիմնավորումը: Ընտրվել են տնտեսական լավագույն ցուցանիշներ ունեցող տարբերակը, ինչպես նաև տեղանքի նպաստավոր պայմաններ ունեցող տեղանքը:

Չքնադ գետի վրա ՓՀԷԿ ի կառուցումը կնպաստի.

- նոր աշխատատեղերի ստեղծմանը, համայնքային և պետական բյուջետային մուտքերի ավելացմանը,
- համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը,
- էլեկտրաէներգիայի արտադրությանը

ՓՀԷԿ-երը չեն արտանետում ջերմոցային գազեր: ՓՀԷԿ-երի կառուցումը կնպաստի Հանրապետությունում ածխաթթու գազի (CO₂) արտանետումները կրճատմանը, դրական կանդրադառնա օդային ավազանի, ինչպես նաև կլիմայի փոփոխության վրա:

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, հզորությունները, օգտագործվող բնական ռեսուրսները և նյութերը.

Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքի Ստեփանավան քաղաքի և Ուրասար բնակավայրի վարչական

տարածքներում, Չքնաղ գետի կիրճում: Համաձայն Կադաստրի անշարժ գույքի վկայականի Ստեփանավան քաղաքի տարածքում տրամադրվել է 0,25 հա էներգետիկ նշանակության հողեր, հողամասի սեփականության իրավունքով: Ուրասար բնակավայրի տարածքում տրամադրվել է 0,4հա տարածք: Գետի 1490,0 մ նշահատվածքում նախատեսվում է կառուցել պատվարային ջրընդունիչ, որն իրենից ներկայացնում է գործնական պրոֆիլով բետոնային ջրթափ կառուցվածք, որի ձախ կողմում կառուցվելու է տղմագտիչ և ջրընդունիչ: Վերին բյեֆի նիշը կազմում է 1492,60մ: Դերիվացիայի թողունակությունը կազմում է 3.5 մ³/վրկ

ՀԷԿ-ի շենքի չափերը կազմում են 10.0 x 36մ:

Ներքին բիեֆում ջրի նիշը կազմում է 1338,6մ;

Դերիվացիայով ՓՀԷԿ-ի կարևոր էներգետիկ պարամետրերն են՝ հաշվային ելքը, հաշվային ճնշումը և դրվածքային հզորությունը:

10.1 Շահագործման փուլ.

Տեխնիկա-տեխնոլոգիական ցուցանիշները և լուծումները:

<ՉՔՆԱՂ-1> ՓՀԷԿ-ի բնորոշ պարամետրերն են.

Դերիվացիոն խողովակաշարի երկարությունը՝ $L = 7550$ մ;

Ստատիկ ճնշումը՝ $H_u = 154,0$ մ;

Հաշվարկային ճնշումը՝ $H = 140,0$ մ;

Հաշվարկային ելքը՝ $Q = 3,5$ մ³/վրկ;

Դրվածքային հզորությունը՝ $N = 4200$ կվտ;

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ $\Sigma = 17,74$ մլն.կվտ.ժ:

Նախագծվող ՓՀԷԿ-ը պետք է հնարավորին չափ լրիվ օգտագործվի Չքնաղ գետի 1492.6 մ և 1338.6մ նիշերի միջև եղած հիդրոէներգետիկ պաշարները՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը:

ՉՔՆԱՂ-1՝ ՓՀԷԿ-ի մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. Պատվարային ջրընդունիչ /գլխամասային հանգույց/;
2. Ճնշումային դերիվացիոն խողովակաշար;
3. ՓՀԷԿ-ի շենք:

Պատվարային ջրընդունիչը:

Պատվարային ջրընդունիչը կառուցվելու է Չքնաղ գետի 1490,0 մ նիշի վրա, որն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափ կառուցվածք, որի ձախ կողմում նախատեսվում է տղմագտիչ և ջրընդունիչ: Տղմագտիչի և ջրընդունիչի մուտքամասում տեղադրվելու են 2 հաստ հարթ փականներ: Վերին բյեֆի ջրի նիշը կազմում է 1492,6մ: Բետոնային ջրաթափային պատվարի բարձրությունը կազմում է 2.6մ: Ջրաթափային պատվարի հուսալի աշխատանքը ապահովելու համար պատվարից առաջ նախատեսվում ատաճնատափ 10մ լայնությամբ: Ջրաթափային պատվարից հետո առավելագույն ելքերի ավելցուկային էներգիան մարելու համար նախատեսվում է ջրծեծ հորորի երկարությունը ընդունվում է 11,մ, իսկ խորությունը-0,60մ;

Ջրծեծ հորից հետո նախատեսվում է ռիսերմա լրացուցիչ ավելցուկային էներգիան մարելու համար:

Տղմագատարանը երկխցանի է, 22մ երկարություն և 5մ լայնության: Տղմագատարանում հավաքվող ջրաբերուկները գետի ջրերի վազման միջոցով հեռացվում են դեպի գետ՝ տղմագատարանի վերջում տեղադրված փականների միջոցով:

Պատվարային ջրընդունիչի կից տարածքում նախատեսվում է պահակակետ 15մ² չափով:

Ձկնուղի: Պատվարային ջրընդունիչի աջ կողմում նախատեսվում է կառուցել

ձկնուղի: Ձկնուղին նախատեսված է ապահովելու համար ձկների տեղաշարժը վերին բյեֆից ներքին բյեֆ և հակառակը: Ձկնուղին իրենից ներկայացնում է 16 ե/բետոնյա խցեր/հորեր/, որի չափերը հատակագծում 1,70*1,50մ է, ջրի մակարդակների տարբերությունը կազմում է 0,30մ: Ձկնուղու երկարությունը կազմում է 27,20մ, իսկ հատակի լայնությունը 1,1մ: Ձկնուղու միջոցով բաց է թողնվում բնապահպանական ելքերը՝ /210-660/ լ/վրկ: Ձկնուղու շենքի նիշը ընդունված է 0,5մ բետոնային ջրթափային պատվարի կատարի նիշից, այսինքն 1492,10մ:

Ճնշումային դերիվացիոն խողովակաշար. միաձյուղ Ճնշումային խողովակաշարն ամբողջությամբ նախատեսվում է կառուցել գետի ձախ ափում: Խողովակաշարն հիմնականում անցնում է գոյություն ունեցող հողային ճանապարհի կողքով, որտեղ տարածված են ժամանակակից դելյուվիալ-կոլյուվիալ առաջացումները: Նախատեսվում է կառուցել միաձյուղ մետաղական Ճնշումային դերիվացիոն խողովակաշար, որի երկարությունը 7550,0մ

Խողովակաշարը լինելու է պողպատյա: Այն սկսվում է ջրընդունիչի ջրհորից և անցնելով հիմնականում գոյություն ունեցող ճանապարհի եզրով ավարտվում է տուրբինային փականի մոտ: Խողովակաշարը հիմնականում ծածկվելու է բնահողով:

Ձկնապաշտպան ցանց. Ճնշումային խողովակաշարի մուտքամասում տեղադրվում է ձկնապաշտպան ցանց, որի տրամագիծը 2000մմ է, ցանցը իրենից ներկայացնում է 6A1 ամրան որոնց միջև հեռավորությունը կազմում է 5x5մմ:

ՓՀԷԿ-ի շենք ՓՀԷԿ-ի շենք կառուցվելու է Չքնաղ գետի աջափնյա հատվածում, որը գետակի հունից բարձր է մոտ 3.0մ

ՀԷԿ-ի շենքի չափերը կազմում են 10.0 x 36մ: ՓՀԷԿ-ի շենքը կառուցվելու է Չքնաղ գետի աջ ափին՝ 0.00 նիշում: ՓՀԷԿ-ի շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում է տեղադրել չորս հիդրոագրեգատ՝ բաղկացած ռեակտիվ շառավղա-առանցքային տուրբիններից և սինխրոն գեներատորներից: ՓՀԷԿ-ի շենքում տեղակայված չորս հիդրոագրեգատները կունենան ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ: Շենքի ներսում տեղակայվելու են . նախասրահ՝ 9.5մ²

- տնօրենի սենյակ՝ 21,3մ²
- օպերատորի սենյակ՝ 6.5մ²
- Բիոզուգարանով սանհանգույց՝ 20.1մ²

ՓՀԷԿ-ի շենքի չափերը որոշված են ըստ ագրեգատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության: ՓՀԷԿ-ի շենքում տեղադրվելու է էլեկտրական կամրջային ամբարձիչ 10,0 տ բեռնաբարձությամբ: Հիդրոագրեգատների հիմքերն արվում են երկաթբետոնից: Մեքենայական շենքի պատերն արվում են քարի մեղիսային շարվածքով, իսկ ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից: Հիդրոէլեկտրակայանի ղեկավարման բոլոր վահանակների համար նախատեսվում է առանձին տեղամաս ՓՀԷԿ-ի շենքի ներսում: Տուրբինների փականները նույնպես տեղավորվում են շենքի մեջ:

ՓՀԷԿ-ի հաշվային ելքը վերցվում է պատվարային ջրընդունիչից սկիզբ առնող Ճնշումային խողովակաշարից, որը տեղադրվում է գոյություն ունեցող ճանապարհին գուգահեռ և ՓՀԷԿ-ի շենքից հետո վերադարձվում է գետ, առանց որակի ու քանակի փոփոխության: Դրա հետևանքով չի խախտվում գոյություն ունեցող ջրասպառողների ռեժիմը:

Շահագործող անձնակազմը գտնվելու է շենքում և ՓՀԷԿ-ի չափիչ-փոխակերպիչների ցուցմունքներն ու ազդանշանները կհաղորդվեն կայանի դիսպետչերական վահանակ:

Տարածքն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Հակահրդեհային համակարգ. նախատեսվում է հրդեհի ազդանշան ավտոմատ աշխատող համակարգեր; Այդ թվում

-Ծխային տվիչ-2հատ

-Ձեռքի ազդասարք

-Լուսաձայնային շշակ

Շենքի տանիքը լինելու է պողպատե ծածկով մետաղական՝ ներկված հակակոռոզիոն ներկով և ջերմապահպանիչ շերտով:

Ենթակայանը զբաղեցնելու է 180մ2 մակերես, կառուցվող ենթակայանում տեղադրվում է 6300կՎԱ հզորության 35/6կՎ լարման ուժային տրանսֆորմատոր:

35կՎ տրանսֆորմատորային ԵԿ-ի և 35կՎ հաշվառքի սարքավորումները նախատեսվում են տեղադրել համաձայն «Схемы принципиальные электрические распределительных устройств подстанций 35-750кВ 2007г.» տիպարային լուծումների, ըստ որի 35կՎ հաշվառքի համար ընտրվել է «բլոկ անջատիչով» N35-3Н, իսկ տրանսֆորմատորային ենթակայանի համար՝ «բլոկ բաժանիչով» N35-1 սխեմաները: Կայծակի ուղիղ հարվածներից շանթապաշտպանությունն իրականացվում է նոր տեղադրված 15.85մ բարձրության շանթարգել ձողի միջոցով: Ըստ հաշվարկների արդյունքների բոլոր սարքավորումները 35կՎ և հաղորդալարերը ընդգրկված են այդ շանթարգելով ստեղծված շանթապաշտպանիչ գոտում:

35կՎ ուժային տրանսֆորմատորի, լարման տրանսֆորմատորի՝ 35կՎ գծերից եկող կոմուտացիոն գերլարումներից պաշտպանության համար, ԵԿ-ում տեղադրվում են գերլարման սահմանափակիչներ:

Ենթակայանի հողանցումն իրենից ներկայացնում է 40x4 կտրվածքի շերտապողպատից (հորիզոնական էլեկտրոդ) և 2.0մ երկարության 50x50x5մմ կտրվածքի անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ) բաղկացած ցանց:

Ենթակայանի սնումը նախատեսվում է իրականացնել 35կՎ օդային գծով: Էլեկտրական էներգիայի հաշվառման համար նախատեսվում է 35կՎ օդային գծի սկզբում և 6կՎ լարման կողմում տեղադրել բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներ:

Համաձայն Օրենքի ենթակայանը ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Օդային գիծ. նախատեսվում է միաշղթա 35կՎ ՕԳ-ի կառուցում, այն միացնելով 35կՎ «Արմանիս 1» ՕԳ-ի N5 խարսխային հենարանին՝ ճյուղավորման սխեմայով:

Ճյուղավորման կետում նախատեսվում է բաժանիչի և հաշվառքային սարքվածքի տեղադրում: Նախագծվող 35կՎ ՕԳ-ի ուղեգծի սկիզբը՝ (ՊԿ0+00) կառուցվող 35/6կՎ

լարման ԵԿ-ի մուտքի պորտալն է, ուղեգծի վերջը՝ «Արմանիս-1» ՕԳ-ի N5 խարսխային, երկշղթա Y2M տիպի հենարանը: Նախագծվող ՕԳ-ի երկարությունը 2965.0մ է: Ուղեգծի 800.0մ հատվածը անցնում է կիրճով, ստորգետնյա ջրատարին զուգահեռ, որտեղ ապահովված են ջրատարից տեխնիկական կանոնակարգով պահանջվող հորիզոնական հեռավորությունները (հորիզոնական հեռավորությունները ջրատար խողովակից առավել

է կանոնակարգով պահանջվող 2.0մ-ից: N8 հենարանից ՕԳ-ը բարձրանում է կիրճից վեր և 2065.0մ հատվածը անցնում է կիրճին մոտ՝ խոտհարքներով: ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են 22 հատ խարսխաանկյունային, մետաղական հենարաններ AY “Սևան” տիպի: Հենասյունները տեղադրվելու են համայնքային հողերի վրա, որի համար Նախաձեռնողը համայնքի հետ կկնքի սերվիտուտի պայմանագիր:

Համաձայն Օրենքի օդային գիծը ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Օդափոխություն. ՀԷԿ-ի շենքն ապահովված է լինելու օդափոխության համակարգով՝ օդափոխության ճաղաշարով:

Լուսավորություն, տեսահսկում. Նախագծով նախատեսվում է 35կՎ ԲԲՄ-ի արտաքին լուսավորություն: Լուսավորության ցանցի լարումը 380/220Վ է (ֆազա զրո) և այն սնվում է փոփոխական հոսանքի սեփական կարիքների պահարանից: Արտաքին լուսավորության ցանցը սնելու համար նախատեսվում է լուսավորության խմբակային ՕՊԼԲ-6 տիպի բաշխիչ վահան:

Արտաքին լուսավորությունն իրականացվում է “LED” տիպի լուսարձակներով որոնք տեղադրվում են ցանկապատին՝ 2մ բարձրության վրա: Լուսավորության ցանցը իրականացվում է BBΓԽԴ-660 տիպի 3x1.5մմ² կտրվածքի մալուխներով, որոնք անցկացվում են ծալքավոր խողովակով: Լուսավորման կայանքների համար մալուխների ընտրությունը և ստուգումը կատարված է լարման թույլատրելի կորստի ապահովման պայմաններով, ինչպես նաև տաքացմամբ:

Տեսահսկման նպատակով տեղադրվելու են ցանցային տեսաձայնագրիչ, թվային գունավոր տեսախցիկ համակարգիչ:

Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով:

Ջերմամատակարարում. Ջեռուցումը նախատեսվում է իրականացնել 5 ԿՎտ հզորության էլեկտրական ջերմաօդամղիչներով, որը ձմռանը կծառայի որպես ջեռուցիչ, իսկ ամռանը որպես օդափոխիչ:

Շինության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Ցանկապատում. նախատեսվում է 35կՎ ԲԲՄ-ի տարածքի ցանկապատում : Ցանկապատումն իրականացվում է 80x80x3մմ խողովակների տեղադրումով: 80մմ չափերով խողովակը նախատեսվում է ցանկապատման և դռան տեղադրման համար:

Սոցիալական. ՓՀԷԿ-Ի շենքում շահագործման ժամանակ աշխատելու են հերթափոխով 3-ական մարդ մեկ հերթափոխում, ընդամենը ներգրավվելու է 9 մարդ:

Պատվարային ջրընդունիչում աշխատելու է օրական մեկ մարդ հերթափոխով, ընդամենը 3 մարդ: Ընդամենը ներգրավվելու է 12 մարդ:

10.2 Շինարարության փուլ.


Քանդման աշխատանքներ. Հողամասում բացակայում են քանդման ենթակա շենք-շինություններն, ուստի քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

Շինհրապարակ. Շինարարական աշխատանքների իրականացման համար շենքի կառուցման տարածքում կազմակերպվելու է շինհրապարակ՝ համապատասխան կահավորումով:

- գրասենյակ/ հանդերձարան
 - բիոզուգարան 1 հատ
 - պահեստ
 - պահակատուն
 - ավտոմեքենաների անիվների լվացման կետ
 - ավտոմեքենաների կայանատեղի
 - ջրի բաք
 - լուսավորության և հակահրդեհային պաշպանության միջոցներ
- Տեղադրվելու է աղբի տարա՝ 1 հատ:

Շինհրապարակի հատակագիծ

Շինարարական աշխատանքների
կազմակերպման հառակագիծ



Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Շինարարության ժամանակ աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, գրասենյակը, տեղադրվելու են ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման կետ՝ 8,0x3,5 մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում մեքենաների անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան: Իսկ շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասե վերգետնյա խողովակներով կամ դրենաժային համակարգով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1 հատ 90-100մ³ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր: Շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային միջոցներով, վահանակով, շանթարգելներով: Շինհրապարակում նախատեսվում է նաև ջրի բաք՝ տարածքի ջրցանման նպատակով:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, տեսահսկման համակարգով, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները: Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Ժամանակացույց. ՓՀԷԿ-ի իրականացման ընդհանուր տևողությունը կազմելու է առավելագույնը 2 տարի, որից մեկ տարին նախապատրաստական, նախագծային, փորձաքննության գործընթացներն են, մեկ տարին շինարարության փուլը:

“ԶԵՆԱԴ-1” ՓՀԷԿ-ի կառուցման օրացուցային գրաֆիկ

Աշխատանքների անվանումը	12ամիս	2ամիս	2ամիս	2ամիս	2ամիս	2ամիս	1ամիս	1ամիս
Նախապատրաստական աշխատանքներ Նախագծային աշխատանքներ և փորձաքննություն								
Հողային աշխատանքներ								

Եր								
Պատվարային ջրընդունիչ								
Ճնշումային խողովակաշար								
ՀԵԿի շենք								
Հիդրոագրեգատի մոնտաժում								
Ենթակայան և էլեկտրական մաս								
ՀԵԿի գործարկում								

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. շինարարության փուլում տեխնիկա-տրանսպորտային միջոցներից օգտագործվելու է.

- ամբարձիչ
- բեռնատար
- փոքր չափի բուլդուզեր
- էքսկավատոր
- եռակցող սարք

Շինարարական տեխնիկան կայանվելու է գրունտային ճանապարհի եզրին:

Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաների կայանման վայրերում փռվելու է մանրախիճ կամ ավազ՝ հողային ռեսուրսների մեջ յուղերի արտահոսքը կանխելու նպատակով:

Հողային աշխատանքներ. Հողային աշխատանքները ըստ ժամանակացույցի տևելու է 2 ամիս: Գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են ընդհանուր 92560մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 1325մ³-ը բուսահող է: Հանվող հողային զանգվածն առաջանալու է ՀԵԿ-ի շենքի, պահակակետի կառուցման, ճնշումային խողովակաշարի անցկացման աշխատանքներից: Հանվող բուսահողը պահվելու է տեղում, օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար:

Ենթակառուցվածքներ. Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհից:

Ջրամատակարարում և ջրահեռացում. աշխատողների համար խմելու ջուրը մատակարարվելու է պատրաստի վիճակում՝ շշերով և համապատասխան տարաներով:

Կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է բիոզուգարան՝ 1.5*2.4 չափերի: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Էլեկտրամատակարարում. Էլեկտրամատակարարումը կատարվելու է «ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանին համաձայն:

Թափոններ. Շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- կենցաղային աղբ,
- աղտոտված լաթեր,
- մետաղական մնացորդներ և այլն:

Աղբահեռացում. Առաջանալու է կենցաղային աղբ՝ 4800 կգ/տարի:

Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 1 պլաստիկե աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը կկատարվի Ստեփանավանի համայնքապետարանի կողմից տեղեկանքի հիման վրա՝ 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր համայնքապետարանի համաձայնությամբ՝ պայմանագրային հիմունքներով: Հավելված 6:

Բարեկարգում.

ՓՀԷԿ-ի շենքի շինարարության ավարտից հետո տարածքը ցանկապատվելու և բարեկարգվելու է:

10.3. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

10.3.1 Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների համար:

Աշխատողների համար որպես խմելու ջուր օգտագործվելու է բերովի ջուր՝ շշերով կամ տարրաներով:

Ելնելով գործունեության վայրից, որը գտնվում է ձորում՝ գետի ափին, խոնավ տարածքներում շինարարության փուլում ջրցան չի կատարվելու: Տեխնիկական ջուրն օգտագործվելու է հրդեհաշիջման նպատակով և բետոնաշաղախի օգտագործման համար՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաև մեքենաների անիվների լվացման համար: Որպես տեխնիկական ջրի աղբյուր ծառայելու է բերովի ջուրը, որը տարածք է բերվելու ավտոցիստեռնով: Տեխնիկական ջի մատակարարման աղբյուրը կճշտվի շինթույլտվության փուլում, երբ համապատասխան դրական եզրակացությունները ստանալուց հետո ընկերությունը կընտրի Կապալառուին, որն էլ կկնքի պայմանագիր տեխնիկական ջրի մատակարարման լիցենզիա ունեցող ընկերության կամ անձի հետ:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{Է.ձ.}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ
 N– ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ
 n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 35 մարդ
 N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ
 T – աշխատանքային օրերի թիվն է՝ 312 օր:

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 35 \times 0.025) \times 312 = 297,96 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,955 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ելնելով կլիմայական պայմաններից և գործունեության ենթակա տարածքի տեղադիրքից՝ տարածքի ջրցան չի նախատեսվում:

Անիվների լվացման համար Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է օրը 2-3 հատ՝ 1 անգամ հաճախականությամբ:

Տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 3 = 2.4 \text{ ր/վրկ}$$

Ջրահեռացում.

Շինարարության փուլում կենցաղային կեղտաջրերի հեռացման, ինչպես նաև վերջինիս շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում է տեղադրել 1 հատ բիոզուգարան:

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման համար շահագործման փուլում ՀԷԿ-ի շենքում տեղադրվելու է բիոզուգարան, որի մաքրումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից:

10.4.Նյութեր. **Շինարարության ժամանակ** օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- բետոն, երկաթբետոն
- ամրաններ
- պողպատյա խողովակներ,
- փայտ
- խիճ, ցեմենտ, ավազ
- տուֆ
- ցանց
- հակակոռոզիոն ներկ:

Օգտագործվող նյութերը մատակարարվելու են ըստ անհրաժեշտության՝ խմբաքանակներով: Բետոնը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից, բետոնախառնիչ մեքենաներով: Անհրաժեշտության դեպքում բետոնի շաղախի պատրաստումը կատարվելու է տեղում՝ տակդիրների վրա: Բետոնային աշխատանքների համար կօգտագործվի ցանկացած մակնիշի պորտլանդ կամ սուլֆատակայուն ցեմենտ:

11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն(շինարարության և շահագործման, փակման փուլեր)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան և Ուրասար բնակավայրերում:

Գնահատման հաշվետվության շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, կատարվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի և հողային աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների,
- ջրային ռեսուրսների օգտագործման, հնարավոր աղտոտման,
- կենդանական և բուսական աշխարհի հնարավոր փոփոխությունների,
- հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, դեգրադացիայի,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

11.1 Օդային ավազան.

Շինարարության փուլ. Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից:

Շահագործվող տեխնիկայի արտանետումների հաշվարկի արդյունքները.

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /832ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.0101	0,18
CH (ածխաջրածիններ)	0,243	0.00101	0.001
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.07	1,26
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.012	0,215
Ծմբային անհիդրիդ		0,0011	0,0033

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր առավելագույն արտանետումները լինելու են հողային աշխատանքներից 2 ամիս և աշխատող տեխնիկատրանսպորտային միջոցներից /4 ամիս/, որը լինելու է կարճաժամկետ՝ և թույլատրելի նորմերի սահմաններում՝ պայմանավորված գնահատման հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների պարտադիր կատարմամբ:

Հողային աշխատանքները կատարվելու են երկու ամիս: Գետին մոտ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ հողային ծածկույթը խոնավ է, ուստի փոշու արտանետումներ չեն լինելու, հետևաբար փոշենստեցման աշխատանքներ ՓՀԷԿ-ի կառուցման ընթացքում չեն կատարվելու:

Աննշան համազարկային արտանետումներ կառաջանան նաև զոդման աշխատանքներից: Հավելված 5

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեությունն իրականացվում է ձորում, գետի ափին, որտեղ օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նորմայից ցածր, շինարարության փուլում օդային ավազանի աղտոտվածության ավելացում չի նախատեսվում և այն կլինի նշված ցուցանիշներից շատ ցածր:

Օդային ավազանի վրա ազդեցությունները կանխատեսվում են շինարարության ընթացքում միայն ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ. օդային ավազանի և կլիմայի վրա հնարավոր ազդեցություններ չեն նախատեսվում, քանի որ շահագործման ընթացքում օդային ավազանի աղտոտումը գործնականում զրոյական է: Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի նախատեսվում, քանի որ գազ կամ այլ տեսակի վառելիքի, ինչպես նաև քիմիական նյութերի օգտագործում չի նախատեսվում, ուստի տեխնոլոգիական գործընթացում օդային ավազան արտանետումներ չեն կանխատեսվում:

11.2 Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ. Գործունեության ենթակա տարածքների հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի: Գրանցված իրավունքի տեսակը սեփականություն:

Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գրության դերիվացիոն խողովակաշարը մոտ 0,13091 հա անցնում է Պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերով /նպատակային նշանակությունը անտառ, գործառնական նշանակությունը՝ թփուտ/: Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կդիմի «Հայանտառ» ՊՈԱԿ-ին անտառների օգտագործման պայմանագիր կնքելու համար:

Գործունեության տարածքում համաձայն՝ մասնագետի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների՝ անտառի տարածքը էրոզացված չէ, հողերը

համարվում են անտառային դարչնագույն հողեր՝ մուգ սև գույնի փուխր զանգվածով, չերոզացված: Հողի նմուշառման և անալիզի միջոցով պարզվել է, որ հողը հեշտ փխրվում է, հարուստ է հումուսով՝ 7.8%, pH-ը՝ 6.5-7.5:

Հողային աշխատանքներն ըստ ժամանակացույցի տևելու է 2 ամիս: Գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են ընդհանուր 92560մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 1325մ³-ը բուսահող է: Հետ լիցք է արվում 74039մ³, տեղափոխվում է՝ 17196մ³ Հանվող հողային զանգվածն առաջանալու է.

- ՀԷԿ-ի շենքի տարածքից՝ 1310մ³, որից 875 մ³ բուսահող, հետ լիցք՝ համահարթեցումով՝ 250 մ³, տեղափոխում՝ 185մ³, բուսահողը ամբողջությամբ հետ լիցք է արվում:
- Ճնշումային խողովակաշարի կառուցումից՝ 88330մ³, որից հետ լիցք՝ 72860 մ³, ավելցուկային հող՝ 15020մ³, բուսահող 450 մ³:
- Պատվարային ջրընդունիչ 2920մ³, ետ լիցք՝ 929մ³, ավելցուկային հողի տեղափոխում՝ 1991մ³:

Ավելցուկային հող տեղափոխվելու է 5կմ՝ հեռավորության վրա՝ համայնքի համաձայնությամբ:

Բուսահողը պահվելու է տեղում, օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար: Հողային աշխատանքները կատարվելու են մեխանիզմներով՝ էքսկավատորով և ձեռքի գործիքներով:

Փառահատվող տարածքում արտահայտված թեքություններ չկան, ինչը կարող է նպաստել էռոզիայի առաջացմանը: Միաժամանակ ծառապատումը և խոտածածկը կիրականացվի այնպես, որ բացառի սողանքների առաջացումը:

Շահագործման փուլում, ելնելով գործունեության տեսակից և բնույթից, հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

11.3. Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ- Շինարարարական աշխատանքները կատարվելու են գետի հարակից տարածքում, գետի մեջ, հնարավոր են ջրի, գետի հունի, հարակից տարածքների աղտոտում և աղբոտում շինարարական նյութերով, ուստի հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ ուղղված՝ գետը և հարակից տարածքները աղտոտումից գերծ պահելուն: Շահագործման փուլ: ՀԷԿ-ի կառուցումն ուղղակի ազդեցություն է ունենալու գետի հոսքի վրա, քանի որ կառուցվելու է 7,5կմ երկարության դերիվացիոն խողովակ: ՓՀԷԿ-ի հաշվարկային ելքը վերցվում է պատվարային ջրընդունիչից սկիզբ առնող խողովակաշարից և վերադարձվում է գետ՝ առանց որակի ու քանակի փոփոխության ուստի չի խախտվում գետի ջրային ռեժիմը:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից 27.09.2024թ.-ին «Ստեփանոս -1»ՍՊԸ-ին տրվել է «Չքնադ-1»ՓՀԷԿ-ին ջրօգտագործման թույլտվություն՝ N 413-24: Ջրօգտագործման թույլտվությունը տրվել է մեկ տարի ժամկետով՝ 24 ժամյա գրաֆիկով, առավելագույնը 3.50մ³/վրկ ծավալով/V-3.50մ³/վրկ/, այնուհետև ձեռնարկողը դիմելու է երկարաձգման համար:

Գետից ջրառը և ջրահեռացումը կատարվելու է հետևյալ կոորդինատներով.

Ջրառ.

$x = 440\ 17', 57.61'$. $y = 410\ 00' 59.39''$ $H = 1510.0$ մ

Ջրահեռացում.

$x = 440\ 22', 35.05'$, $y = 410\ 00' 41.98''$ $H = 1354.0$

Չքնաղ գետի (դ.Ստեփանավան) ընդունված բնապահպանական ելքերը համաձայն 25 Հունվարի 2018թ. 57-Ն ՀՀ Կառավարության 30 հունիսի 2011թվականի թիվ 927 որոշման, մ³/վրկ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
0.58	0.59	0.64	0.99	0.88	0.87	0.84	0.61	0.40	0.32	0.42	0.56

Չքնաղ գետի ջրառի ուղղահաստածքում բնապահպանական ելքերը, մ³/վրկ

	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
0.46	0.47	0.51	0.79	0.71	0.70	0.67	0.49	0.32	0.26	0.34	0.45

Կեղտաջրեր.

Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար տարածքում նախատեսվում է 1,5*2,2 բիոզուգարանի տեղադրում, որի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում նախատեսվում է բիոզուգարանի տեղադրում, կեղտաջրերը կհեռացվեն մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային եղանակով:

11.4 Կենսաբազմազանություն.

Բուսական աշխարհ

Շինարարության փուլ: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար մասնագետի կողմից հունվար ամսին կատարվել են ուսումնասիրություններ: Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ ՀԷԿ-ի շինության կառուցման 500-600 քմ տարածքի, ՕԳ-ի անցման և ամբողջ գետի երկայնքով, ինչպես նաև հարակից տարածքներում հիմնականում աճում են ուռենիներ: Գործունեության հետևանքով ՓՀԷԿ-ի տարածքում հատման ենթակա են մոտ 60 ծառ, որից 35-36-ը՝ 20 տարեկան և ավելի հասակով: Ըստ ուսումնասիրության՝ հատման ենթակա ծառերի կազմը հետևյալն է.

- Ուռենի- 53 հատ
- Հացենի- 2 հատ
- Ակացիա-1 հատ

- Վայրի խնձորենի-2 հատ
- Վայրի տանձենի-1 հատ
- Սալորենի- 1 հատ

Հարակից տարածքներում առկա են նաև հատուկենտ սոճիներ, բոխի, եղնի և այլ տեսակներ: Բացի վերոնշյալ ծառատեսակներից տարածքում առկա են մասրենիներ, մոշ, չիչխան և այլ թփատեսակներ: Ընկերությունը փոխհատուցելու է կտրված ծառերը, տեղում նույն թվով փոխհատուցումն ապահովելով՝ տնկելով մոտ 60 ծառ, միաժամանակ՝ 649 հատ ծառ տնկվելու է համայնքի հետ համաձայնեցված վայրերում՝ համայնքային հողերում:



Խողովակաշարն անցնելու է Չքնաղ գետի ափով՝ մոտ 3մ հեռավորության վրա և չի վնասելու գետի ափին աճած ծառերին: Խողովակաշարի որոշ հատված՝ 0,13091 հա, անցնելու է անտառային հողերով: Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կդիմի «Հայանտառ» ՊՈԱԿ-ին անտառների օգտագործման պայմանագիր կնքելու համար:

Գլխամասի տարածքում բացակայում են ծառերը, առկա է խոտածածկ:

ՕԳ-ի անցման ուղեգծի տարածքում առկա են ծառեր, որոնք հատվելու են:

Տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Գործունեության և հարակից տարածքները չեն առնչվում հատուկ պահպանվող տարածքների հետ: Հայցվող տարածքը գտնվում է «Գյուլագարակ» Դենդրոպարկ՝ 5.45-9 կմ հեռավորություններ վրա:

Կենդանական աշխարհ. Դերիվացիոն խողովակաշարի և կառուցվող ՓՀԷԿ-ի շինարարությունը կառաջացնի մարդկային գործոնի շարժ, երթևեկության՝ մեքենաների շարժ, աղմուկ, ինչը կարող է ազդել կենդանատեսակների տարածքից հեռանալուն ավելի անվտանգ վայրեր, որոնք շինարարության ավարտից հետո կարող են վերադառնալ հին բնակության վայրը:

Համաձայն կատարված ուսումնասիրության՝ հատվող ծառերի վրա թռչունների բներ չեն հայտնաբերվել: Ուսումնասիրության արդյունքում գործունեության ենթակա

տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների բնադրավայրեր չեն հայտնաբերվել:

Գլխամասի կառուցման հատվածն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ մոտ 15մ հեռավորության վրա գտնվում է գործող «ՀԷԿ», ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում արդեն տարածքում բացակայում են կենդանատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հունվար ամսին կատարված ուսումնասիրության արդյունքում գետում ձկների, ինչպես նաև Կարմրախայտի բնադրավայրեր, ձվադրավայր չեն հայտնաբերվել, միաժամանակ նախատեսվել են միջոցառումներ ձկնատեսակների պահպանությանն ուղղված:

Շահագործման փուլ. ՓՀԷԿ-ի շահագործումը կարող է վնասել գետի կենսաբազմազանությանը, նկատի ունենալով, որը մոտ 7.5կմ տարածքում ջուրը վերցվելու է խողովակի մեջ, և կենդանական աշխարհի համար կստեղծվեն ոչ նպաստավոր պայմաններ: Գետի բուսական և կենդանական աշխարհը էական ազդեցությունների չի ենթարկվի, քանի որ ՀԷԿ-ի համար ջրառը կկատարվի համաձայն ջրօգտագործման թույլտվության՝ 3.5 մ³/վրկ հաշվարկային ելքով, ուստի գետի ձկնաշխարհի համար անհրաժեշտ ջրաքանակը կպահպանվի: Միաժամանակ պատվարային ջրընդունիչի աջ կողմում նախատեսվում է կառուցել ձկնուղի: Ձկնուղին նախատեսված է ապահովելու համար ձկների տեղաշարժը վերին բլեֆից ներքին բլեֆ և հակառակը: Բացի այդ Չքնաղ գետի ջրային ռեժիմը, բնութագրվում է երկարատև վարարումներով (ապրիլ-հուլիս)՝ պայմանավորված ձյան և սառույցի հալոցքի, անձրևներով սնմամբ: Չքնաղ գետի դիտարկումների ժամանակ ջրի մակարդակի առավելագույնը կազմել է 158սմ, իսկ տարվա համար՝ 146 սմ:

Համաձայն մասնագիտական գրականության տվյալների տուրբինների մեջ մտնող ջրի հոսքի ջերմաստիճանային տատանումը՝ կախված դրսի ջերմաստիճանից, կամ բացակայում է կամ աննշան է, ինչը չի կարող բացասաբար անդրադառնա գետի կենսաբազմազանության վրա:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու կամ բացառելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

11.5 Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների՝ գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են 3-5-րդ դասերին:

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ

պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)՝20կգ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝8կգ :

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 5կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիր՝ 31401100 08 99 5)՝ 17196մ³:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)՝ 4800կգ/տարի քանակով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ
 n – աշխատողների թիվն է :

$$M=40*120= 4800\text{կգ/տարի կամ } 15.4 \text{ կգ/օր}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով աշխատողների առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 3 մարդ:

$$M=3*360= 1080\text{կգ/տարի կամ } 2.94\text{կգ/օր}$$

Շահագործման փուլ. ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 2մ³ ծավալով, որը պայմանավորված է յուղհավաք հորի տարողությամբ:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4) 3կգ:
- Կտորների տեսքով ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդներ (4-րդ դաս՝ 31403502 01 00 4) 3մ³ :
- Յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3) 0,7մ³:
- վտանգավոր թափոնների գործածության ՀՀ-ում պատկանում է լիցենզավորման ենթակա գործունեության՝ ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի պետք է իրականացվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից,

Հաշվետվությունում նախատեսվում են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Համաձայն Ստեփանավանի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության/ճարտարապետահատակագծային առաջադրանք/ գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներ, արգելավայրերը:

11.7. Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Թրթռումների մակարդակը սահմանվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2006թ. մայիսի 17-ի N533-Ն որոշման նորմերով:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Ուրասար բնակավայրից 346 մ, Ստեփանավան քաղաքից՝ 123մ հեռավորությունների վրա: Ուրասար բնակավայրի հատվածում աղմուկ առաջացնող սարքավորումներ և մեխանիզմներ չեն օգտագործվելու: ՀԷԿ-ի կառուցման տարածքում ձևավորվելու է շինհրապարակ: Ելնելով այն հանգամանքից, որ գործունեության տարածքը գտնվում է Չքնաղ գետի հովտում, բարձր լեռնային գոտով տարանջատված ձորի մեջ՝ շրջապատված անտառային հատվածով, առկա է նաև գետի հոսքի ձայնը, շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը չի կարող հասնել բնակավայրերին, և համաձայն հաշվարկների բնակավայրում ունի զրոյական մակարդակ:

Շահագործման փուլում աղմուկի մակարդակը կապված է լինելու սարքավորումների աշխատանքի հետ, ինչի համար կնախատեսվեն համապատասխան միջոցառումներ: Միաժամանակ աղմուկը բնակավայրերին չի կարող հասնել, քանի որ ՓՀԷԿ-ը նախատեսվում է ձորի մեջ, բնակավայրերից հեռու տարածքում և կրկին ունի զրոյական մակարդակ:

11.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարության և շահագործման փուլերում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում կապված՝

- հրդեհների առաջացման, բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի ,
- աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն «ԷՌԱ»ՄՊ ընկերության կողմից տարածքի երկրաբանահետախուզական եզրակացության՝ տարածքում տարածված բոլոր գրունտներն իրենց ֆիզիկա-մեխանիկական հատկություններով կարող են ապահով հիմք ծառայել նախատեսված կառույցների համար: «Չքնաղ»ՓՀԵԿ-ի կառույցների համար շինարարական տեղամասերի ինժեներա-երկրաբանական պայմանները նպաստավոր են, կայուն հիմք են ծառայելու դելուվիալ-կոլուվիալ և ալյուվիալ առաջացումները:

Համաձայն քարտեզագրական նյութերի մոտ 200 մ հեռավորության վրա առկա է սողանքային մարմին, որը պատվարի տեղադիրքից գտնվում է մոտ 200 մ, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի աջ հատվածից վերև և սողանքային մարմինը ակտիվ չէ, բացի այդ պատվարային ջրընդունիչի աջ հատվածում առկա է ժայռ, որը ինքնին հանդիսանում է ամուր հենապատ: այդ սողանքային մարմինը չի կարող որևէ ազդեղություն ունենալ պատվարային ջրընդունիչի կայուն և հուսալի շահագործման վրա:



Հաշվետվությունում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների ազդեցությունները նվազագույնի հասցնելուն:

11.9 Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն, մարդու առողջություն.

Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգներ, կապված՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացող հնարավոր վթարների, ոչ բավարար աշխատանքային պայմանների, թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման, օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման, արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում մարդու առողջության համար պոտենցիալ վտանգ կարող է առաջանալ աշխատողների աշխատանքային անբավարար պայմանների, էլեկտրահարման, վթարների առաջացման հետ: Հաշվետվությունում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության պահպանմանը:

11.10 Սոցիալական գործոններ.

Շինարարության փուլ. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի սոցիալական ազդեցություններ կապված.

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ճանապարհի

գործունեության սահմանափակում:

- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:

Գործունեության իրականացումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն, նպաստելով.

- տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծմանը և նոր աշխատատեղերի բացմանը, համայնքում գործազրկության աճի նվազեցմանը:
- Ներդրումների միջոցով էներգետիկ ոլորտում կարողությունների զարգացմանը, համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:
- Բնակչության էներգամատակարարման պահանջարկի բավարարմանը:
- Համայնքին սոցիալական աջակցությունների հնարավորությունների ստեղծմանը:
- գետի հունի երկայնքը, բարեկարգվելու և ծառայատվելու է, ինչի շնորհիվ ստեղծվելու են նպաստավոր պայմաններ բնակիչների հանգիստը կազմակերպելու համար:

Շինարարության ընթացքում աշխատելու է 40 մարդ, որից՝ 35 բանվոր, 5-ը ինժեներատեխնիկական կազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով: Շահագործման փուլ. շահագործման փուլում ներգրավվելու են 12 մարդ, որոնք աշխատելու են երեք հերթափոխով: ՀԷԿ-ի շահագործման արդյունքում .

- o բացվելու են նոր աշխատատեղեր,
- o մեծանալու է համայնքում ներդրումներին ծավալը, կավելանա համայնքային բյուջե ֆինանսական մուտքերի քանակը,
- o կբարելավվի օդային ավազանը՝ էլեկտրաէներգիայի արտադրությանը նպաստող այլ էներգետիկ ռեսուրսների կրճատման հաշվին,
- o կբարելավվի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, կենսամակարդակը:

11.11 Լանդշաֆտ և բարեկարգում, կանաչապատում.

Գործունեության իրականացումը առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Քանի որ գործունեությունն իրականացվելու է ձորի մեջ, բնակավայրերից ոչ տեսանելի գոտում, ուստի գործունեության իրականացումը բնակիչների համար տեսադաշտային/վիզուալ/ խնդիրներ չի առաջացնելու: Աշխատանքների ավարտից հետո կատարվելու են տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, ինչը կնպաստի բնակչության հանգստի ճիշտ կազմակերպմանը:

Կանաչապատում. Գործունեության իրականացման ժամանակ՝ ՀԷԿ-ի տարածքում կատարվելու են ծառահատումներ, որը փոխհատուցելու համար նախատեսվում է գործունեության տարածքում նույն թվով ծառատնկման աշխատանքներ, տնկվելու է տարածքին բնորոշ 60 ծառ, միաժամանակ համայնքի տրամադրած տարածքներում, համայնքի համաձայնությամբ տնկվելու է 649 հատ տեղանքին բնորոշ ծառ: Հավելված 7:

11.12 Կլիմա - Երկրի մթնոլորտը պարունակում է յուրահատուկ գազեր, որոնք կոչվում են ջերմոցային գազեր, որոնց քանակը մթնոլորտում բավականին քիչ է, մոտ 0.07%: Նշված գազերի առկայությունը անհրաժեշտ է երկիր մոլորակի համար, այնքան էլ նրանց ավելացումները կարող են նպաստել երկրագնդի վրա կլիմայի փոփոխությանը:

Հիմնական ջերմոցային գազերն են ջրային գոլորշիները /H₂O/, ածխածնի երկօքսիդը/CO₂/, մեթանը /CH₄/, քլորֆտորածխածինները /CFS/, ազոտի ենթօքսիդը / N₂O/, օզոնը /O₃/: Որոշ ջերմոցային գազեր մթնոլորտ են արտանետվում բնական գործընթացների արդյունքում, մինչդեռ կան գազեր, որոնք առաջանում և արտանետվում են բացառապես մարդու գործունեության հետևանքով:

Նախատեսվող գործունեության ընթացքում օդային ավազան չնչին քանակներով արտանետումները լինում են միայն շինարարության փուլում ավտոտրանսպորտի աշխատանքից, կրում են կարճատև և ժամանակավոր բնույթ: Ջերմոցային գազերի արտանետումներն բացակայում են, ուստի որևէ ազդեցություն չինարարության և շահագործման ընթացքում չի ենթադրվում:

«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄԶՄ) շրջանակներում խրախուսվում է փոքր ՀԷԿ-երի կառուցումը, քանի որ ՓՀԷԿ-երը մթնոլորտ ջերմոցային գազեր չեն արտանետում:

11.13. Գումարային ազդեցություններ. Շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատումը հաշվարկվում է նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների՝ տվյալ դեպքում աշխատող ՀԷԿ-ի, իրականացման հետևանքով: ՓՀԷԿ-երի գումարային ազդեցությունները բացառելու, ՀՀ կառավարության N 488-Ն որոշմամբ սահմանվել են այն գետերի ցանկը, որտեղ առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձկադրավայրեր կամ գետերը արդեն ծանրաբեռնված են դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի: Գետերի ցանկում Չքնաղ գետը բացակայում է:

Տվյալ գործունեության դեպքում գումարային ազդեցություններ հնարավոր է առաջանան Չքնաղ գետի և Ձորագետ թափվող այլ ջրային ռեսուրսի համատեղ շահագործման, ինչպես նաև համայնքում սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունների հետ: Ջրային ռեսուրսի ծախսի գնահատումը կատարվել է 27.09.2024թ. շրջակա միջավայրի նախարարության կողմից «Ստեփանոս-1» ՍՊԸ-ին՝ «Չքնաղ» ՓՀԷԿ-ի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությամբ նախատեսված էր 4680 ԿՎտ դրվածքային հզորություն: Սույն նախագծով տվյալների ճշգրտման արդյունքում դրվածքային հզորությունը սահմանվել է 4200 ԿՎտ: Հաշվի առնելով վերը նշվածը կարելի է փաստել, որ ՀԷԿ-ի կառուցման նպատակով ջրօգտագործումը գտնվելու է շրջակա միջավայրի նախարարության 27.09.2024թ. տրամադրված ջրօգտագործման թույլտվությամբ նախատեսված նորմերի սահմաններում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն ստանալուց հետո կներկայացվի ջրօգտագործման թույլտվության ստացման հայտ Կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1332-Ն որոշման պահանջների համաձայն՝ <https://nature.e-gov.am/> հարթակի միջոցով:

12. Տնտեսական վնաս.

Ելնելով գործունեության բնույթից, որի իրականացման հետևանքով օդային, ջրային ռեսուրսների վրա հնարավոր աղտոտվածությունները բացակայում են, Օգտագործվելու են հողային պաշարներ, ներկայացվում է հողային ռեսուրսներին հասցվող տնտեսական վնասի գնահատումը, հաշվարկները:

Հողի տնտեսական վնասի հաշվարկ

ՓՀԷԿ-ի շենքի զբաղեցրած տարածքի 360մ^2 մակերես, ենթակայանը 180մ^2 , ընդհանուր՝ 540մ^2 համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն՝ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումների:

ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԿԳ_{\text{հող}} = U_{\text{բազա}} \times U_{\text{հող}} \times Գ_q,$$

որտեղ՝

$ԿԳ_{\text{հող}}$ -ն գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

$U_{\text{բազա}}$ -ն հողերի 1 մ^2 մակերեսի բազային արժեքն է՝ 2887,5 դրամ,

$U_{\text{հող}}$ -ն գնահատվող հողամասի մակերեսն է 540մ^2 ,

$Գ_q$ -ն բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է: ՓՀԷԿ-ը կառուցվում է Ստեփանավան բնակավայրի վարչական տարածքում, որը գտնվում է XII -րդ գոտու սահմաններում՝ գոտիականության գործակիցն է՝ 0.0024:

$$ԿԳ_{\text{հող}} = 540 \times 2887,5 \times 0.0024 = 13721,4 \text{ դրամ}$$

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$U = \text{ԾՀՎ} + U_{\text{ՎՀ}} + \text{ԾՈԻՎ},$$

որտեղ՝

U -ն ազդեցությունն է,

ԾՀՎ-ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են: Նման ծախսեր չեն նախատեսվում:

$U_{\text{ՎՀ}}$ -ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում՝ ԿԳ_{հող}:

ԾՈԻՎ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$$U = \text{ԾՀՎ} + ԿԳ_{\text{հող}},$$

$$U_{\text{ՎՀ}} = 0 + 13721,4 = 13721,4 \text{ դրամ}$$

13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Հիդրոէներգետիկայի զարգացման համար Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որտեղ ամրագրվել է ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը, նախանշվել են ռազմավարական ծրագրերը և նորմավորվել է կարգավորող դաշտ: Հայաստանում փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) կառուցումը համարվում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն: Հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված նախատեսվել են ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան մեղմման ուղղված միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները:

13.1. Օդային ավազան.

Շինարարության փուլ: Գործունեության շինարարության ընթացքում օդային ավազանի հնարավոր արտանետումները լինելու են կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում՝ թվով մեկ առավելագույնը երկու մեքենա աշխատելու հնարավորությամբ և պայմանավորված գնահատման հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների պարտադիր կատարմամբ:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,

- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,

- ցանկապատել շինարարական հրապարակը՝ նախագծին համապատասխան,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում:

- փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական

արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Շահագործման փուլ: Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չկան:

13.2. Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,

- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու են, ծածկվելու են անջրթափանց թաղանթով,

- հողաբուսաշերտը օգտագործել տարածքի բարեկարգման նպատակով կամ ավելցուկային բուսահողի դեպքում հանձնել համայնքի տնօրինությանը,

- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում, մեխանիկական եղանակով՝ բահերով,

- հողային աշխատանքները կատարելու ժամանակ բացառել գետի ափերի հնարավոր փոփոխությունները, չթուլացնել գետի ափերի բնական հիմքերը,

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքներում, խոտածածկ հատվածները,

- կատարել խախտված հողերի վերականգնում, շինարարական աշխատանքների

ընթացքում հանված բուսահողն օգտագործել տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա,
- նվազագույնի հասցնել տարածքում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- մեքենաների կայանման վայրերում տեղադրել մանրախիճ՝ հողային ռեսուրսներ յուրերի հնարավոր արտահոսքը կանխարգելելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

- ծառահատվող տարածքում խիստ արտահայտված թեքություններ չկան, ինչը կարող էր նպաստել էռոզիայի առաջացմանը, միաժամանակ այն լիովին բացառելու համար նախատեսվում է ծառահատված տարածքներին հարակից ցանել հացազգի և թիրեռնածաղկավոր խոտաբույսեր, կատարել ծառատնկում, ստեղծել կանաչ տարածքներ:

Շահագործման փուլում, ելնելով գործունեության տեսակից, հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում, բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

13.3. Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- խողովակաշարն անցկացնել ըստ նախագծային լուծումների՝ գետից 3մ հեռավորության վրա,
- ապահովվել ջրային ռեսուրսների աղբոտման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելումը, ինչպես նաև ապահովել ջրային ռեժիմի համար բարենպաստ պայմանները,
- կանխարգելել ջրային ռեսուրսի աղտոտումը՝ տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից,
- մեքենաների սպասարկումը(լվացում, լիցքավորում) կատարել մասնագիտական կետերում:

Կեղտաջրերի հեռացում.

Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են ժամանակավոր տեղադրվող 1 հատ բիոզուգարանից,
- բիոզուգարանների մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում ՀԷԿ-ի շահագործման և ջրային ռեժիմի նորմերի պահպանման նպատակով նախատեսվում է.

- պահպանել ՀՀ Ջրային Օրենսգրքի պահանջները՝ ջրային ռեսուրսի ամբողջական համակարգի օգտագործման ընթացքում,
- ապահովել գետում ջրառի կետի էկոլոգիական թողքը, բացառելով ջրօգտագործան թույլտվությամբ ամրագրված, ըստ ամիսների, ջրաքանակից ավել օգտագործումը,
- ՓՀԵԿ-երի բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգերի ներդրում համաձայն՝ ՀՀ կառավարության 2023թ. 14 դեկտեմբերի N 2207-Ն որոշման պահանջների,
- ջրի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը, դրանց կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը,
- մակերևութային ջրային ռեսուրսի վարարումներից, սելավներից և սողանքներից պաշտպանվելու համար կանխատեսումների կազմում,
- ՓՀԵԿ-ի կառուցվածքների զինում ժամանակակից սարքավորումներով և տեխնիկայով,
- սարքավորումների տեխնիկական վիճակի վերահսկում:

Կեղտաջրեր.

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է բիոգուգարանի տեղադրում, որը կհամապատասխանի ՀՀ-ում կեղտաջրերի հեռացման նորմատիվ պահանջներին: Բիոգուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

13.4. Կենսաբազմազանություն.

Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում են միջոցառումներ.

- գետը և ափամերձ տարածքները զերծ պահել աղտոտումից և աղբոտումից,
- չիրականացնել այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում կոչնչացվի կամ տեսակային կազմի փոփոխության կենթարկվի գետի ողողատի բնական բուսականությունը,
- կտրված ծառերի փոխարեն փոխհատուցման նպատակով տարածքում տնկվելու են նույնքան տեղանքին բնորոշ ծառ, միաժամանակ համայնքապետարանի կողմից հատկացված վայրերում նախատեսվում է տնկել նաև թվով 649 հատ ծառ,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,
- Շինարարության ընթացքում առաջնորդվելու են 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-

Ն որոշման դրույթներով: Ապահովվելու է նաև համապատասխան մասնագետի ներկայությունը շինարարության ընթացքում:

- Գործունեությունը սկսելու փուլում ձեռնարկողը դիմելու է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին համապատասխան մասնագետ տրամադրելու խնդրանքով:

- համաձայն Կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշման կկնքվի վնասի փոխհատուցման պայմանագիր՝ անտառային տնտեսությանը հասցված վնասը փոխհատուցելու նպատակով:

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

- շինարարական աշխատանքները չկատարել բնադրման և ձվադրման շրջանում՝ սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին, այլ կատարել վերարտադրման ժամանակաշրջանից դուրս:

Շահագործման փուլ.

Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- ՓՀԵԿ-ի տարածքում հնարավորինս նվազեցնել գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,

- ապահովել ՓՀԵԿ-երի գլխամասային հանգույցները բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգերով,

- ճնշումային խողովակների մուտքն ապահովել ձկնանցարանով և ձկնապաշտպան կառույցով,

- բացառել գետից ջրառի իրականացումը ԶԹ-ով նախատեսված ջրաքանակից ավել՝ ձկներին գետի կենսաբազմազանությանը չվնասելու նպատակով,

- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով:

13.5. Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ժամանակ տարածքը և շրջակա միջավայրը գերծ պահել թափոնների կուտակումներից,

- մետաղական մասերը առանձնացնել և որպես մետաղի ջարդոն հանձնել հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 1 հատ 1,5x1մ3 չափերի պլաստմասե աղբահավաք տարողության մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը՝ կատարել կանոնավոր, ըստ անհրաժեշտության, համայնքի հետ համաձայնեցված վայր՝ պայմանագրային հիմունքներով,

- յուղերով աղտոտված ավազը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառել spill kit տեսակի ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը:

Շահագործման փուլում թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 1 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե աղբաման,

Վերանորոգման ընթացքում առաջացող մետաղական մասերը, ջարդոնը, տեսակավորել և հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին՝ վերջիններիս վերամշակման նպատակով,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնել ասֆալտապատող ընկերություններին,

- սև մետաղի/խողովակներ, սարքավորումների մասեր և այլն/ և գունավոր մետաղների/ /լարեր/ մնացորդները հանձնել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

-վտանգավոր թափոնների գործածությունը ՀՀ-ում պատկանում է լիցենզավորման ենթակա գործունեության՝ ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի պետք է իրականացվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից,

13.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Համաձայն համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներն, արգելավայրերը:

Ուստի վերջիններիս վրա հնարավոր ազդեցությունների մեղմման ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

13.7. Աղմուկ և թրթռում

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը,

- աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում, օգտագործել համապատասխան խլացուցիչներ,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

Շահագործման փուլում աղմուկի մակարդակը կապված է լինելու սարքավորումների աշխատանքի հետ:

- բացառել աշխատատեղերում սարքավորումներից աղմուկի մակարդակի գերազանցումը,

- գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),

- տարածքում աղմուկի մակարդակի պարբերաբար չափագրումներ,

- սարքավորումների սարքին վիճակում պահպանում, վերահսկում:

13.8. Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- բոլոր կառույցների հիմքերի բացման ժամանակ անհրաժեշտ է կատարել դրանց երկրաբանական փաստագրումներ,

- ՀԷԿ-ի շինարարության ընթացքում պարտադիր է ինժեներ-մասնագետի ներկայությունը,

- շինարարության ընթացքում ապահովել լանջերի կայունության պահպանումը, ելնելով տեղանքի ռելիեֆի բարդ պայմաններից՝ կտրտվածություն, լանջերի մեծ թեքություններ, հնարավոր սողանքների առաջացումից,

- նախատեսվող գործունեության վայրն ապահովել հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով կամ շանթարգելներով,

- տարածքը ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ՝ կապված սարքավորումների շահագործման ժամանակ հնարավոր վթարային իրավիճակների, հոսքագծերի անսարքության, տեխնոլոգիական ցիկլի, աշխատանքի ռեժիմի խաթարման, (հոսանքի մատակարարման խափանումներ), թափոնների կուտակման, տեղափոխման հետ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների կանխարգելման համար նախատեսվում է.

- ՀԷԿ-ի շենքն ապահովված է լինելու շանթապաշտպան համակարգով, հակահրդեհային կրակմարիչներով՝ 3 հատ, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ 2 հատ հակածխային տվիչ, արտածման համակարգերով, ձեռքի ազդասարքերով, լուսարձակային շշակներով, ինչպես նաև համապատասխան վերահսկման սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- Չքնադ ՓՀԷԿ-ն ապահովված է լինելու ավտոմատացված հեռակառավարմամբ, համաձայն շինարարական նորմերի և կանոնների,
- գետի աջ ափի ցանկապատում՝ գետի հեղեղումներից, սողանքներից պաշտպանվելու համար,
- պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկում, դրանց հերմետիկության ստուգումներ,
- սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից,
- գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների, մարդու անվտանգությանն ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տեխնածին վթարների, աղետների, սողանքների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը: Օդային գիծ.

- հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,
- ՕԳի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ,
- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,
- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից:

13.9. Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն, մարդու առողջություն

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման, աշխատանքի անվտանգությունն ապահովելու և առողջության պահպանման համար նախատեսվում է.

- ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլ),
- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն),
- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- սորուն և վտանգավոր նյութերը տեղադրել փայտե տակդիրների վրա,
- ապահովել աշխատողներին համապատասխան պաշտպանական միջոցներով,
- օդային զծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային զծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը:

Շահագործման փուլ.

Անհրաժեշտ է.

- հիդրոտեխնիկական սարքավորումների և սարքերի շահագործումն իրականացնել համապատասխան հրահանգների՝ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա,

- մինչև թափոնների տեղափոխելը, դրանք պահել փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը,

- կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,

- էլեկտրահաղորդագծերում կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,

- օդային զծի բոլոր հենարանները համարակալել, նշագրել և գունավորվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

- էլեկտրահաղորդման հենասյուներին վրա տեղադրել էլեկտրական լարման մասին համապատասխան նշագրում՝ մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով,

- պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ զծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով,

- էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական զծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի,

- պահպանել թռիչքներում միջֆազային հեռավորությունները, տեխնիկական կանոնակարգի պահանջները՝ հաղորդալարի եզրաչափը հողից:

Արևակայանի կառուցման և շահագործման աշխատանքները պետք է կատարել ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:

13.10. Սոցիալական.

Շինարարության փուլում նախատեսվում է.

- աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել գործունեության տարածքից դուրս՝ մերձգետնյա հատվածներում կենցաղային աղբի և այլ թափոնների, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

Շինարարության և շահագործման փուլերում աշխատատեղերի համար առաջնահերթությունը տրվելու է համայնքի բնակիչներին, նպատակ ունենալով նպաստել տեղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը, գործազրկության և արտագաղթի նվազմանը:

Շահագործման փուլում նախաձեռնողը համայնքի հետ կստորագրի հուշագիր, որտեղ կներառվեն վերջինիս կողմից համայնքի բյուջե ներդրման ուղղությունները տարեկան կտրվածքով՝ համայնքում առկա խնդիրների լուծման նպատակով: Գործունեության իրականացման ընթացքում կներգրավվեն համայնքի բնակիչները՝ 40 մարդ, շահագործման փուլում մոտ՝ 12 մարդ:

Գործունեության ավարտից հետո տարածքը, ներառյալ գետի հունի երկայնքը, բարեկարգվելու է:

13.11. Լանդշաֆտ և բարեկարգում, կանաչապատում.

Լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, Լանդշաֆտային այլ փոփոխությունները,

- հողային աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,

- տարածքը մաքրել թափոններից, վերականգնել խախտված տարածությունները,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի հարթեցում, ստեղծել անձրևաջրերի հեռացման ցանցեր՝ կայանային հանգույցում և դերիվացիայի ուղեգծում:

- Ստեփանավանի համայնքապետարանի համաձայնությամբ և տրամադրված տարածքներում կատարել ծառերի տունկ, նախապես համայնքի հետ համաձայնեցնելով ծառերի տեսակային կազմը և տնկման ժամանակահատվածը: Կանաչապատման համար բուսահողը ջեռք բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի համաձայնությամբ:

Շահագործման փուլ.

- հնարավորինս պահպանել գործունեության տարածքին կից կանաչ տարածքները, չխախտելով և չվտանգելով տարածքի բնական էկոհամակարգերը:

14. Մշտադիտարկումների (մոնիթորինգի) իրականացման պլան.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելուն և վերահսկելուն ուղղված իրականացվող գործընթաց է:

Մոնիթորինգի իրականացման նպատակով նախատեսվում է.

- ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերի պահպանման վերահսկում:
- Ջրային ռեսուրսի մոնիթորինգն իրականացնել ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» N 118-Ն և «ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՍ ՋՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՋՐԱՀԱՇՎԻՉ (ՋՐԱԶԱՓԻՉ) ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ, ԿՆՔՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության 14 դեկտեմբերի 2023 թվականի N 2207-Ն որոշման պահանջներին համապատասխան:

- Ջրային ռեսուրսի վերահսկողություն ջրային ռեսուրսի էկոհամակարգի՝ բնական վիճակի, ջրերի որակի և քանակի պահպանման, գործունեության իրականացման հետևանքով առաջացած աղտոտվածության, էրոզիոն և այլ բացասական ազդեցությունների կանխարգելելու նպատակով:
- Ջրային ռեսուրսի էկոհամակարգի վերահսկողության իրականացում՝ բնական վիճակի, ջրերի որակի և քանակի պահպանման, գործունեության իրականացման հետևանքով առաջացած աղտոտվածության, էրոզիոն և այլ բացասական ազդեցությունների կանխարգելելու նպատակով:
- Ճնշումային խողովակների մուտքում ձկնապաշտպան ցանցով ապահովում՝ վերահսկում:
- ՋԹ-ով սահմանված բնապահպանական թողքի հաշվառում և վերահսկում՝ ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգերով:
- Բնական ջրահոսքերում էկոլոգիական թողքի ռեժիմի երաշխավորված և ավտոմատ գործող մոնիթորինգի (թողքի գրանցման և տվյալների հավաքագրման) համակարգով, ինչպես նաև ահազանգման համակարգով՝ տեխնոլոգիական գործընթացի խափանման վերահսկման նպատակով:
- Ջրաչափիչ սարքի միջոցով ջրի հոսքի և քանակի վերաբերյալ տվյալները փոխանցել լ/վրկ կամ մ³/վրկ, մ³/օր կամ մ³/տարի ձևաչափերով:
- Գետում բնակվող ձկների, գետի կենսաբազմազանության մոնիթորինգային ուսումնասիրությունների իրականացում:
- Չքնաղ գետի ավազանում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ ձկնատեսակների ձվադրման վայրերի հայտնաբերման և վերահսկման նպատակով:
- Գործունեության և հարակից տարածքում պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով:
- Գործունեության իրականացման ընթացքում սողանքային մարմնի կանոնավոր մշտադիտարկման իրականացում՝ գործունեության տարածքում անվտանգության կանոնների պահպանման հսկողություն՝ գործունեության իրականացման ընթացքում սողանքային երևույթների ռիսկը նվազեցնելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով:
- Գործունեության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկում:

15. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումները, մոնիթորինգը՝ աղյուսակային տեսքով:

Բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը: Ընկերությունը բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսում է 5 000 000 /հինգ միլիոն/դրամի ներդրում /:

Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Աղյուսակ 11

№	Գործունեության տարածքում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1.	Օդային ավազան	Շինարարության փուլ. Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է. - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ, - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, - շինարարական աղբը տեղափոխել դրանց	Կապալառու	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ

		հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, - ցանկապատել շինարարական հրապարակը՝ նախագծին համապատասխան, - բացառել տարածքում թափոնների բաց այրումը, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում: Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում: Շահագործման փուլ: Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չկան:		
2.	Հողային ռեսուրսներ	Շինարարության փուլ: Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է. - հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,	Կապալառու	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ

		- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը: - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին, - ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է տարածքում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - նվազագույնի հասցնել բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, մեխանիկական եղանակով՝ բահերով: - հողային աշխատանքերը կատարելու ժամանակ բացառել գետի ափերի հնարավոր փոփոխությունները, չթուլացնել գետի ափերի բնական հիմքերը, - հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքներում խոտածածկ		
--	--	--	--	--

		հատվածները, - կատարել խախտված հողերի վերականգում, շինարարական աշխատանքների ընթացքում հանված բուսահողն օգտագործել տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա, - նվազագույնի հասցնել տարածքում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: - ցանել հացազգի և թիթեռնածաղկավոր խոտաբույսեր, տնկել ծառեր, ստեղծել կանաչ տարածքներ, հողի եռոզիան բացառելու նպատակով: Շահագործման փուլում, ելնելով գործունեության տեսակից, հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում, բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:		
3.	Ջրային ռեսուրսներ	Շինարարության փուլ: Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են. - խողովակաշարն անցկացնել ըստ նախագծային լուծումների՝ գետից 3մ հեռավորության	Կապալառու	«ՄՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ

		վրա, - ապահովվել ջրային ռեսուրսների աղբոտման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելումը, ինչպես նաև ջրային ռեժիմի համար բարենպաստ պայմանները, - ապահովվել ջրերի աղտոտումը՝ տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից, - մեքենաների սպասարկումը(լվացում, լիցքավորում) կատարվելու է մասնագիտական կետերում: Կեղտաջրերի հեռացում. Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է. -շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են ժամանակավոր տեղադրվող 1 հատ բիոզուգարաններից՝ 1,5*2 մ չափերի: -Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: - Շին.աշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են: Շահագործման փուլ. ՓՀԷԿ-ի կառուցվածքների զինում ժամանակակից սարքավորումներով և տեխնիկայով, - սարքավորումների տեխնիկական վիճակի վերահսկում: - ՓՀԷԿ-երի բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման		
--	--	--	--	--

		ջրաչափական համակարգերի ներդնում համաձայն ՝ ՀՀ կառավարության 2023թ. 14 դեկտեմբերի N 2207-Ն որշման պահանջների, - ջրի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը, դրանց կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, - մակերևութային ջրային ռեսուրսի վարարումներից, սելավներից և սողանքներից պաշտպանվելու համար կանխատեսումների կազմում, - ՓՀԷԿ-ի կառուցվածքների զինում ժամանակակից սարքավորումներով և տեխնիկայով, - սարքավորումների տեխնիկական վիճակի վերահսկում: Կեղտաջրեր. Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է բիոզուգարանի տեղադրում, որը կհամապատասխանի ՀՀ-ում կեղտաջրերի հեռացման նորմատիվ պահանջներին: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:		
4.	Կենսաբազմազանություն	Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում են միջոցառումներ. - գետը և ափամերձ տարածքները զերծ պահել	Կապալառու	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ

		աղտոտումից և աղբոտումից, -չիրականացնել այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում կոչնչացվի կամ տեսակային կազմի փոփոխության կենթարկվի գետի ողողատի բնական բուսականությունը, -կտրված ծառերի փոխարեն փոխհատուցման նպատակով տնկվելու են տեղանքին բնորոշ 60 ծառ, միաժամանակ համայնքապետարանի կողմից հատկացված վայրերում տնկվելու է թվով 649 հատ ծառ, -գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացն համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, -Շինարարության ընթացքում առաջնորդվել 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման դրույթներով: Ապահովել նաև համապատասխան մասնագետի ներկայությունը շինարարության ընթացքում: - Գործունեությունը սկսելու փուլում ձեռնարկողը դիմելու է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին համապատասխան մասնագետ տրամադրելու		
--	--	--	--	--

		խնդրանքով: - համաձայն Կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշման կկնքվի վնասի փոխհատուցման պայմանագիր՝ անտառային տնտեսությանը հասցված վնասը փոխհատուցելու նպատակով: - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, - խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով: - շինարարական աշխատանքները չկատարել բնադրման և ձվադրման շրջանում՝ սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին, այլ կատարել վերարտադրման ժամանակաշրջանից դուրս: Շահագործման փուլ. Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է. - ՓՀԷԿ-ի տարածքում հնարավորինս նվազեցնել գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով, - Ճնշումային խողովակների մուտքն ապահովել ձկնանցարանով և ձկնապաշտպան կառույցով, - Բացառել գետից ջրառի իրականացումը ՋԹ-ով նախատեսված ջրաքանակից ավել՝ ձկներին գետի		
--	--	--	--	--

		կենսաբազմազանությանը չվնասելու նպատակով, - ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,		
5.	Թափոններ	Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է. - գործունեության իրականացման ժամանակ տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից, - մետաղական մասերը առանձնացնել և որպես մետաղի ջարդոն հանձնել հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 1 հատ 1,5x1մ3 չափերի պլաստմասե աղբահավաք տարողության մեջ, - կենցաղային աղբի հեռացումը կատարել կանոնավոր, ըստ անհրաժեշտության, համայնքի հետ համաձայնեցված վայր՝ պայմանագրային հիմունքներով, - յուղերով աղտոտված ավազը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառել spill kit տեսակի ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը: Շահագործման փուլում թափոնների	Կապալառու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ

		ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է. - կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 1 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե աղբաման, - Վերանորոգման ընթացքում առաջացող մետաղական մասերը, ջարդոնը, տեսակավորել և հանձնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին՝ վերջիններիս վերամշակման նպատակով, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնել ասֆալտապատող ընկերություններին, - սև մետաղի/խողովակներ, սարքավորումների մասեր և այլն/ և գունավոր մետաղների/ /լարեր/ մնացորդները հանձնել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:		
6.	Պատմամշակութային և բնության հուշարձաններ	Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:	Կապալառու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ
7.	Աղմուկ և թրթռում	Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.	Կապալառու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ

		- պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը, - աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում, - շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում, օգտագործել համապատասխան խլացուցիչներ, - պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները, Շահագործման փուլում աղմուկի մակարդակը կապված է լինելու սարքավորումների աշխատանքի հետ: - բացառել աշխատատեղերում սարքավորումներից աղմուկի մակարդակի գերազանցումը, - գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն), - տարածքում աղմուկի մակարդակի պարբերաբար չափագրումներ, - հոսքագծերի սարքին վիճակում պահպանում, վերահսկում:		
--	--	--	--	--

8.	Արտակարգ իրավիճակներ	Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է. -բոլոր կառույցների հիմքերի բացման ժամանակ անհրաժեշտ է կատարել դրանց երկրաբանական փաստագրումներ, - ՀԷԿի շինարարության ընթացքում պարտադիր է ինժեներ-մասնագետի ներկայությունը, -շինարարության ընթացքում ապահովել լանջերի կայունության պահպանումը, ելնելով տեղանքի ռելիեֆի բարդ պայմաններից՝ կտրտվածություն, լանջերի մեծ թեքություններ, սողանքային երևույթներից, -նախատեսվող գործունեության վայրն ապահովել հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով կամ շանթարգելներով, - տարածքը ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից: Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների կանխարգելման համար նախատեսվում է. - ՀԷԿ-ի շենքն ապահովված է լինելու շանթապաշտպան համակարգով, հակահրդեհային կրակմարիչներով՝ 3 հատ, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ 2 հատ հակածխային տվիչ, արտածման համակարգերով, ձեռքի ազդասարքերով, լուսարձակային շշակներով, ինչպես նաև համապատասխան վերահսկման	Կապալառու	«ՍՏԵՓՁՈՐ» ՍՊԸ
----	----------------------	--	-----------	---------------

		սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, - Չքնաղ ՓՀԷԿ-ն ապահովված է լինելու ավտոմատացված հեռակառավարմամբ, համաձայն շինարարական նորմերի և կանոնների, - գետի աջ ափի ցանկապատում՝ գետի հեղեղումներից և սողանքներից պաշտպանվելու համար, - պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկում, դրանց հերմետիկության ստուգումներ, - սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից, գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների, մարդու անվտանգությանն ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տեխնածին վթարների, աղետների, սողանքների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը: Օդային գիծ. - հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում, - ՕԳի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ, - ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց		
--	--	---	--	--

		մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ, - ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից:		
9.	Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն, մարդու առողջություն	Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է. - ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլ), - ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն), - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - սորուն և վտանգավոր նյութերը տեղադրել փայտե	Կապալառու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ

		տակդիրների վրա, -ապահովել աշխատողներին համապատասխան պաշտպանական միջոցներով, - մալուխային և օդային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը: Շահագործման փուլ. Անհրաժեշտ է. - հիդրոտեխնիկական սարքավորումների և սարքերի շահագործումն իրականացնել համապատասխան հրահանգների՝ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա, -մինչև թափոնների տեղափոխելը, դրանք պահել փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը: կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին, -էլեկտրահաղորդագծերում կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին, - օդային գծի բոլոր հենարանները համարակալել, նշագրել և գունավորվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,		
--	--	--	--	--

		- էլեկտրահաղորդման հենասյունների վրա տեղադրել էլեկտրական լարման մասին համապատասխան նշագրում՝ մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով, -պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով, - Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի, - պահպանել թռիչքներում միջֆազային հեռավորությունները, տեխնիկական կանոնակարգի պահանջները՝ հաղորդալարի եզրաչափը հողից, -Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի, Արևակայանի կառուցման և շահագործման աշխատանքները պետք է կատարել ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին»		
--	--	--	--	--

		N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:		
10.	Սոցիալական	Շինարարության փուլում նախատեսվում է. - աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը, - բացառել տարածքից դուրս կենցաղային աղբի և այլ թափոնների, մեքենաների կուտակումները, - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: Շահագործման փուլ. -բացվելու են նոր աշխատատեղեր, -մեծանալու է համայնքում ներդրումներին ծավալը, կավելանա համայնքային բյուջե ֆինանսական մուքերի քանակը, - բարելավվելու է բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, կենսամակարդակը, -տարածքը, ներառյալ գետի հունի երկայնքը, բարեկարգվելու է: -	Կապալառու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ
11.	Լանդշաֆտ և բարեկարգում, կանաչապատում	Լանդշաֆտի պահպանման և բարեկարգման համար նախատեսվում է. - բացառել բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը, - բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները, - հողային աշխատանքերի ավարտից հետո կատարել տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,	Կապալառու	«ՍՏԵՓԶՈՐ 1» ՍՊԸ

		- տարածքը մաքրել թափոններից, վերականգնել խախտված տարածությունները, - Ստեփանավանի համայնքապետարանի համաձայնությամբ կատարել ծառերի տունկ, նախապես համայնքի հետ համաձայնեցնելով ծառերի տեսակային կազմը և տնկման ժամանակահատվածը: Շահագործման փուլ. - տրանսպորտային միջոցներն աշխատելու են հաջորդաբար, չխաթարելով էկոհամակարգը, - հնարավորինս պահպանել կանաչ տարածքները, չխախտելով և չվտանգելով տարածքի բնական էկոհամակարգերը, - տարածքը բարեկարգվելու է:		
--	--	--	--	--

16. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)

Աղյուսակ 12

Գործողություններ.	Մոնիթորինգի վայրը	Պարբերականությունը (ժամանակամիջոցը)	Մոնիթորինգի եղանակը	Պատասխանատու և Վերահսկող	Գումարը/դրամ/
1. Շինարարության փուլ.	2	3	4	5	6
1. Օղի աղտոտվածության վերահսկում/փոշի, ծխազագեղ:	Գործունեության տարածք	Ամեն օր	Տեսողական ուսումնասիրություն, չափազրում	Կապալատու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության	Ներառված է իրականացվող աշխատանքների արժեքում

				տեսչական մարմին	
2. Հողային ռեսուրսների աղտոտման վերահսկում.	Գործունեության և հարակից տարածքի հողային ծածկույթի դիտարկման վերահսկում: Հողի աղտոտում՝ Հողի բերրի շերտի, PH-ի ստուգում, վերահսկում: Հողի պնդեցում, խտացման վերահսկում:	Շաբաթը մեկ անգամ Հողային աշխատանքների ընթացքում	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում անալիզ	Կապալառու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին: Համապատասխան մասնագետի՝ Ինժեների կողմից:	Ներառված է իրականացվող աշխատանքների արժեքում
3. Ջրային ռեսուրսների վերահսկում:	-Գետում դիտարկումների կատարման վերահսկում:	Ամենօրյա	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ/ինժեներ հիդրոերկրաբան/ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին	Ներառված է իրականացվող աշխատանքների արժեքում
4. Աղմուկի մակարդակի և թրթռումների վերահսկում:	Գործունեության տարածք	Շաբաթը մեկ անգամ	Աղմկաչափ	Կապալառու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ	Ներառված է իրականացվող աշխատանքների արժեքում
5. Կենսաբազմազանություն	-Գործունեության և հարակից տարածքում կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ	Եռամսյակային և Տարեկան	Տեսողական ուսումնասիրություններ	Կապալառու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ, համապատասխան	Ներառված է իրականացվող աշխատանքների արժեքում

	կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով: -Գետային ավազանում կենսաբազմազանությ ան մոնիթորինգ՝ որոշ ձկնատեսակների, ձվադրման վայրերի հայտնաբերման և վերահսկման նպատակով:			ն մասնագետի ներգրավում	
6. Արտակարգ իրավիճակներ	Գործունեության իրականացման՝ պատվարի տարածք	Պարբերաբար ՝ որոշ շինարարությ ան ընթացքում	Տեսողական ուսումնասիրությո ւններ, անհրաժեշտությա ն դեպքում համապատասխան մասնագետի ներգրավում:	Կապալառու Համապատասխա ն մասնագետի այց	Ներառված է շինարարակա ն աշխատանքն երի արժեքում

6. Շինարարական նյութերի տեղափոխում և հսկողություն:	Գործունեության տարածք	Կախված շինարարական նյութերի տեղափոխման պահանջի անհրաժեշտությունից :	Շինարարական նյութերի որակի համապատասխանության վերահսկում՝ փաստաթղթերի հիման վրա	Կապալառու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ Ինժեներ հիդրոերկրաբան	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
7. Շինարարական նյութերի, կենցաղային աղբի և թափոնների տեղափոխման վերահսկում:	Գործունեության տարածքից	Չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին:	Գործունեության տարածք, ճանապարհներ	Կապալառու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
8. Աշխատողների անվտանգության և առողջության վերահսկում:	Գործունեության տարածք	Ամենօրյա	Հարցումների իրականացում, ստուգումներ	Կապալառու «ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ համապատասխան գերատեսչության տեսչական մարմին	Ներառված է իրականացվող աշխատանքների արժեքում
9. Տարածքի բարեկարգման և կանաչապատման վերահսկում:	Ստեփանավանի համայնքի հետ համաձայնեցված տարածքներում ծառերի տնկման վերահսկում:	Գործունեության իրականացման ընթացքում	Տարածքի բարեկարգում	«ՍՏԵՓՁՈՐ -1» ՍՊԸ Համայնք	1 000 000 դրամ
Շահագործման փուլ.	2	3	4	5	6

1. Զրային ռեսուրսներ	- Բնապահպանական թողքի վերահսկում: - Գետի ջրի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունների վերահսկում: - Մահմանել վերահսկողություն՝ ջրային ռեսուրսի էկոհամակարգի՝ բնական վիճակի, ջրերի որակի և քանակի պահպանման, գործունեության իրականացման հետևանքով առաջացած աղտոտվածության, էրոզիոն և այլ բացասական ազդեցությունների կանխարգելելու նպատակով:	Գլխամասի և գետի խողովակաշարի տարածքում	- ՓՀԷԿ-ի բնապահպանական թողքի հատվածում ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգերի միջոցով: - Դիտողական և գործիքային ուսումնասիրություններ:	«ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմիններ	Ներառված է ՀԷԿ-ի շահագործման ծախսերում
3. Կենսաբազմազանության կենդանիների	Գործունեության տարածք	Տարին մեկ անգամ	Մասնագիտական ուսումնասիրություն	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ	500 000

ապրելավայրերի և բույսերի աճելավայրերի փոփոխությունների հսկողություն:	- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանատեսակների մոնիթորինգ, -ձկնապաշտպան ցանցերով ապահովվածության վերահսկում, Զքնաղ գետի ավազանում կենսաբազմազանությ ան ուսումնասիրություն, մոնիթորինգ՝ ձկնատեսակների, ձվադրման վայրերի հայտնաբերման և վերահսկման նպատակով:			Ներգրավված մասնագետներ	
4.Արտակարգ իրավիճակներ, մարդու առողջություն	-Հիդրոտեխնիկական սարքավորումների զննում և վերահսկողություն: -Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության չափանիշների վերանայում: -Արտակարգ իրավիճակների,	Ամենօրյա ստուգումներ 5 տարին մեկ անգամ	-Վթարային իրավիճակների նվազեցում, անհրաժեշտությա ն դեպքում աշխատանքի դադարեցում: -Քանակական ցուցանիշների գնահատում:	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ Համապատասխա ն գերատեսչության տեսչական մարմին	Ներառված է շահագործմա ն ծախսերում

	հնարավոր հեղեղումների դեպքում պատվարի տարածքում մոնիթորինգի հսկողության ուժեղացում:	Տեղումների առատության դեպքում	Անհրաժեշտությա ն դեպքում լրացուցիչ հակասողանքային միջոցառումների կիրառում:	Ինժեներ հիդրոերկրաբան	
5.Սոցիալական	Գործունեության ընթացքում Արտակարգ իրավիճակների/չրիեղ եղ, երկրաշարժ/ դեպքում սոցիալական և բնապահպանական վնասներ:	- Ֆինանսական աջակցություն համայնքին՝ պայմանագրե րի հիման վրա: -Վնասների գնահատում հաշվարկների հիման վրա:	Աշխատանք տրամադրելու առաջնահերթությո ւն տրվելու է համայնքի բնակչությանը: -Համայնքի զարգացման ծրագրերին մասնակցություն:	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ	
Փակման փուլ					
1.Խախտված տարածքի վերականգնում	Փակման նախագծի հիման վրա սարքավորումների ապամոնտաժում: Խախտված հողատարածքների մակերեսների ռելուլտիվացիա:	Փակումից հետո 1 ամիս:	Ռեկուլտիվացիա	«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ Համայնք	1000 000

17. Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), կոնտակտային տվյալները, հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

18. Եզրահանգում

«ՍՏԵՓՁՈՐ 1» ՍՊԸ-ի կողմից հաշվետվությունում ներառված՝ ԲՄԿՊ-ում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումների իրականացվելու և մոնիթորինգի պլանում նախատեսվող մշտադիտարկման եղանակների և ժամկետների կիրառման դեպքում, ՓՀԵԿ-ի շինարարությունն ու շահագործումը կիրականացվի շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ:

Ընկերության կողմից կատարված ներդրումները կնպաստեն Լոռու մարզի Ստեփանավան համայնքի, ինչպես նաև բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, համայքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, գործազրկության և արտագաղթի նվազմանը:

19. Հետնախագծային վերլուծություն

Մոնիթորինգի և միջոցառումների իրականացման արդյունքում կազմվելու է հետնախագծային վերլուծության պլան, որում ներկայացվում է մոնիթորինգի արդյունքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, գնահատված հնարավոր ազդեցություններին: Որևէ բացասական շեղման կամ անհամապատասխանության դեպքում ձեռնարկողը նախատեսվելու է լրացուցիչ միջոցառումներ աշխատանքների կարգաբերմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետագա տարիների ընթացքում, տարեկան երկու անգամ իրականացնել տարածքի մշտադիտարկում՝ տեղագնություն, որը կներառվի հետնախագծային վերլուծության պլանում:

20. Փակման փուլ.

Գործունեության իրականացման հնարավոր դադարեցման, կարողությունների հետագա հնարավորությունների բացակայության դեպքում, ընկերությունը կատարելու է բոլոր տեսակի պայմանագրերի երկկողմանի դադարեցում, ՓՀԵԿ-ի փակման, հիդրոտեխնիկական սարքավորումների, էլեկտրահաղորդման հենասյուների, ենթակայանի՝

տրանսֆորմատորների, յուղահեռացման համակարգերի և այլ սարքավորումների ապամոնտաժման աշխատանքներ՝ նախօրոք տեղյակ պահելով համապատասխան գերատեսչություններին և համայնքին:

Գործունեության Փակման հետևանքով շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև սոցիալական հնարավոր ազդեցությունը լինելու է բացասական, քանի որ.

- Փակվելու են աշխատատեղերը:
- Կրճատվելու է բնակչության և համայնքին հատկացվող եկամուտները:
- Դադարելու է առանց օդային ավազան ջերմոցային գազերի արտանետման աղբյուրով էլեկտրաէներգիայի արտադրությունը:
- Էլեկտրաէներգիայի սպառման պահանջները հնարավոր է իրականացվեն բնական ռեսուրսների օգտագործումից էներգիա ստանալու միջոցներով:
- ՀԷԿ-ի փակումն ունենալու է դրական ազդեցություն ջրային ռեսուրսի համար, քանի որ էներգետիկ նպատակով կդադարի Չքնաղ գետի ջրային ռեսուրսի օգտագործումը, որը կնպաստի գետի ջրային էկոհամակարգի և կենսաբազմազանության բնականոն վերականգնմանը:

Գործունեության դադարեցման հետևանքով Ընկերությունը կատարելու է.

- Քանդվելու է ՀԷԿ-ի շենքը, ապամոնտաժվելու են հիդրոտեխնիկական սարքավորումները, դերիվացիոն խողովակաշարը:
- Վաճառվելու են չվնասված հիդրոտեխնիկական սարքավորումները և այլ տեխնիկական մասերը:
- Առաջացած թափոնները պետք է տեսակավորվեն և հանձնվեն համապատասխան կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:
- Կկատարվի հողի և լանդշաֆտի ռեկուլտիվացիա:
- Տարածքը բերվելու է նախկին տեսքի, հարթեցվում, բուսահողով ծածկում:
- Գործողությունները կատարվելու են համաձայն նախագծային լուծումների, համայնքի վերահսկողությամբ:

Այդ նպատակով Ձեռնարկողը՝ մինչև փակման աշխատանքների կատարումը, պետք է տեղյակ պահի համապատասխան գերատեսչություններին և համայնքին:

Փակման աշխատանքները պետք է կատարվեն համաձայն՝ Օրենքի պահանջների՝ համապատասխան նախագծի հիման վրա /համաձայն օրենսդրության կներկայացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության /: Փակման փուլի նախագծային լուծումները կներառեն փակման հետևանքով առաջացող թափոնների կառավարումը, տեսակային և քանակական կազմի բնութագիրը, ռեկուլտիվացիոն աշխատանքների նկարագիրը, սոցիալական գործոնները:

21. Հանրային քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ առաջին հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի և Ուրասար բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում, որտեղ ներկայացվել է նախատեսվող գործունեությունը: Քննարկմանը մասնակցել են Ստեփանավան

համայնքի ներկայացուցիչները, բնակիչները, Ուրասար բնակավայրերի բնակիչները, Նախաձեռնողը, վերջինիս ներկայացուցիչները: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային քննարկմանը ներկայացվեց Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված հարցադրումները, նշվեց որ բոլոր բարձրացված հարցերը իրենց լուծումն են գտել ՇՄԱԳ հաշվետվությունում:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումների և հարցադրումների պատասխանները: Քննարկման արդյունքում գործունեության իրականացման վերաբերյալ համայնքի ավագանու կողմից տրվել է նախնական համաձայնություն, ինչը վկայում է համայնքի հեռանկարային զարգացման ծրագրին գործունեության համապատասխանությունը : Հավելված 8:

Գրականություն

1. СП.485.13130.2021:
2. «Աղմուկն աշխատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամաններ:
3. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
4. ՀՀՇՆ 22.01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր:
5. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի»N 430-Ն հրաման:
6. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N342-Ն հրաման՝ «Հայաստանի հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի» մասին:
7. ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
8. Հայաստանի հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն:
9. Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ձեռնարկ 2016թ.
- 10.ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական

/https://armstat.am/file/Map/MARZ_01.pdf/ կայք:

11.Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջ:

12.ՀՀՇՆ 33-01-2014 СНРА 33-01-2014 Հիդրոտեխնիկական կառուցվածքներ. Հիմնական դրույթներ Փոխարեն ՍՆԻՊ 2.06.01-86 Гидротехнические сооружения. Основные положения Взамен СНиП 2.06.01-86

13.ՍՆԻՊ 2.06.06-85 Ամբարտակ բետոնե և երկաթբետոնե Կատարված է փոփոխություն N 1 СНиП 2.06.06-85 Плотины бетонные и железобетонные Внесено изменение N 1

14.ՍՆԻՊ 2.06.07-87 Հենապատեր, նավարկելի ջրարգելակներ, ձկնաթողման և ձկնապաշտպան կառուցվածքներ СНиП 2.06.07-87 Подпорные стены, судоходные шлюзы, рыбопропускные и рыбозащитные сооружения.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 11 հունիսի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**
«ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ
- 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**
Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան գյուղ Ուրասար 6 հողամաս
- 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
Անշարժ գույքի հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ 05/06/2025թ. գ/մ 661
- 4. ՀՈՋԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**
Կադաստրային ծածկագիրը՝ 06-106-0133-0008
Մակերեսի չափը (հա)՝ 0.4
Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 11062025-06-0067, գաղտնաբառ՝ WYPLYTBHHAZU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-codastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱՐՍԵՆԻԿ
ԱՄԻՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 11062025-06-0067, գաղտնաբառ՝ WYPLYTBBAZU


Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կաբող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

Կադաստրի
կոմիտե



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 17 հունիսի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. 10 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առավաճառքի պայմանագիր 05.06.2025թ. թիվ 660

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-007-1519-0013

Մակերեսի չափը (հա)՝ 0.25

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 17062025-06-0037, գաղտնաբառ՝ A3CHA9GFRBUU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կապող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՏԱԹԵՎԻԿ
ԶԱՔԱՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

•

ՎԿԱՅԱԿԱՆ N 17062025-06-0037, գաղտնաբառ՝ A3CHA9GFRBUU

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



PM5A-3518-4159-F718



Փաստաթղթի վավերականության ստուգումն ու ելնկորուսային բնութագրի ներդրումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 10 29.01.2026թ.

Օբյեկտ Կառուցում, Պատվարային ջրընդունիչ 44x57,5մ, Պահակակետ 3x5մ,

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Պատվարային ջրընդունիչ 44x57,5մ, Պահակակետ 3x5մ

(հավելված բնութագրում, հզորություն)

Ռիսկայնության աստիճանը՝ IV Նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան)՝ Նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Մարզ՝ Լոռի, համայնք՝ Ստեփանավան գյուղ Ուրասար 6 հողամաս, 06-106-0133-0008

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող «ՍՏԵՓՈՐ-1» ՍՊԸ / 02898388 / Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆՅԱՆ Փ., S 29, ԲՆ. 36 ԲՆ.

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՑԹԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ «ՍՏԵՓՈՐ-1» ՍՊԸ 11062025-06-0067

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անիրաժեշտ

փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը մինչև 29.01.2028թ.

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ ՈՐ Հ ՈՂ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Էներգետիկայի Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

(հողամասի դիրքը թուղթագիտական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափսերը

0.4 հա

(հողամասի սահմանները՝ կողորդնառային նշահարմամբ, մակերեսը(հա))

3. Հողամասի առկա վիճակը

Հողամասը կառուցապատված չէ

(ռեյինֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

գոյություն ունեցող՝ բնակավայրից դուրս գտնվող ճանապարհով

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցություններ ըստ տրամադրված տեխ. պայմանի

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

գյուղատնտեսական նպատակային նշանակության, արտադրարար

(կից հողագտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Քնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Առկա չէ

(հուշարձանի անվանումը)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Չկա

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներառադիոտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Հարտարապետահատակագծային պահանջներ

Կառուցել պատվարային ջրընդունիչ՝ 44 x 57,5մ արտաքին չափերով և պահակակետ՝ 3 x 5 մ արտաքին չափերով

(եղևելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և երրորդականության փաստաթղթերի պահանջներից, առկա ջաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ որևէ բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպող) ջաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տակիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

65 մ

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

-

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)

-

սահմանային հարկայության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀԵՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

0,63

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

63 %

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

-

9.7 այլ պահանջներ

Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

քանդման ենթակա շինություններ չկան

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն պատվիրատուի առաջադրանքի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

Համաձայն ներկայացվող տեխնիկական պայմանա

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2 (*) Էլեկտրամատակարարում

Համաձայն ներկայացվող տեխնիկական պայմանա

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Համաձայն ներկայացվող տեխնիկական պայմանա

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Շինարարական նյութեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներն են

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Շինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

Կազմակերպել ջրահեռացում և ինժեներական պաշտպանության միջոցներ

(ռեյնֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

Համապատասխան տարածքները բարեկարգել, կանաչապատել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորձ ձևեր, ցանկապատում, զովագի և այլն)

քար, փայտանյութ, ավազ, մետաղ, ցեմենտ, սվաղ, երեսապատման նյութեր

